

## ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ *Ողորեն Մելքոնյան*

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ստորագրված արձանագրությունները եւ սկիզբ առած գործընթացը պատճառ են դարձել բուռն քննարկումների, տեսակետների քախման: Արձանագրությունները ոչ միանշանակ են ընդունվել երկու երկրների քաղաքական, հասարակական, գիտավելլուծական շրջանակների կողմից եւ առաջ բերել տարատեսակ մեկնարանություններ: Ինչպես Հայաստանում, այնպէս էլ Թուրքիայում ընթացող քննարկումների առանցքն են կազմում արձանագրությունների որոշակի կետեր, որոնց հետ կապված՝ հասարակությունների տարբեր հատվածներ լուրջ մտահոգություններ ունեն: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ արձանագրությունների որոշակի դրույթներ հնարավոր է մեկնարանել երկակի, ուստի՝ մասնագիտական համրության խնդիրն է հստակ առանձնացնել շահարկումները, ամբոխահածո ձեւակերպումները՝ իրականությունից:

Այս իմաստով, անդրադառնալով արձանագրություններում առկա որոշ կետերի, առանձնացնենք նախատեսվող միջկառավարական հանձնաժողովի եւ մասնավորապես պատմական հարթության խնդիրներով գրադպուհանագործությունից:

Նախ հիշենք, որ ստորագրված արձանագրություններով նախատեսվում է ստեղծել միջկառավարական հանձնաժողով, որը բաղկացած կլինի յոթ ենթահանձնաժողովներից՝ քաղաքական, ծանապարհային, հաղորդակցության, էներգետիկ եւ ենթակառուցվածքների, իրավական, գիտության եւ կրթության, առեւտրի, գրոսաշրջության եւ տնտեսական համագործակցության, բնապահպանական, պատմական հարթության հարցերով գրադպուհանագործությունից: Ահա հենց այս վերջին ենթահանձնաժողովի ստեղծումը շատերին թույլ է տալիս այն կապել Հայոց ցեղասպանության հարցի հետ:

Մեզ համար հստակ է, որ Ցեղասպանության եղելության փաստը երբեք քննարկման առարկա չի կարող լինել: Այս մասին բազմիցս հայտարարել են հայաստանյան իշխանությունները. մասնավորապես ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 10-ի իր ուղերձում հստակ առանձնացրեց չորս կետ, որոնք առավել մտահոգում էին մեր հասարակությանը, եւ հատուկ շեշտեց. «Ցանկացած հարաբերություն Թուրքիայի հետ չի կարող կասկածի տակ դնել հայ ժողովրդի հայրենագրկման ու ցեղասպա-

**նուրյան իրողուրյունը: Միջկառավարական համձնաժողովի համապատասխան ենթահանձնաժողովը պատմաբանների համձնաժողով չէ»:**

Իսկ Թուրքիայում իշխանությունը փորձում է այս ենթահանձնաժողովը ներկայացնել որպես մի օդակ, որն, իբրեւ թե, քննելու է Հայոց ցեղասպանության եղելության փաստը: Սակայն հարկ է նկատել, որ նման ենթահանձնաժողովի ստեղծման հանգամանքը լուրջ քննադատության է ենթարկվում նաեւ Թուրքիայում. խնդիրն այն է, որ Թուրքիայում պետական մակարդակով տասնամյակներով քարոզվել է, որ Հայոց ցեղասպանությունը սուստ է, նման բան չկա, այս ուղղությամբ գրվել են բազմաթիվ «գիտական գրքեր», ստեղծվել են Ցեղասպանությունը ժխտող կառույցներ եւ այլն: Եվ իհմնվելով այս ամենի վրա՝ թուրքական ընդդիմությունը հարց է բարձրացնում, թե ինչ են քննելու թուրքերն այդ ենթահանձնաժողովի շրջանակներում, մի՞թե այն ցեղասպանությունը, որը տեղի չի ունեցել: Եվ այդ պարագայում ի՞նչ պատասխան են տալու այն բազմամիլիոն հասարակությանը, որին տասնամյակներով քարոզել են հակառակը:

Ինչպես ցույց են տալիս մեր անձնական շփումները թուրքական քաղաքական, քաղաքագիտական, հասարակական տարրեր շրջանակների հետ՝ Թուրքիան, ի վերջո, իրատեսորեն մոտենալով հարցին՝ հասկացել է, որ հայկական կողմի համար Ցեղասպանությունը կասկածի ենթարկելու ցանկացած քայլ անընդունելի է, եւ այս պարագայում թուրքական կողմը կարող է արծարծել հարցը միայն ամբոխահածո հուտորաբանության շրջանակներում:

Կարեւոր է նաեւ միջկառավարական համձնաժողովի եւ նրա օրակարգի ձեւավորման հարցը, որը դեռեւս կանոնակարգված չէ: Հայատանի եւ Թուրքիայի միջեւ երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունում նշված է, որ «Միջկառավարական համձնաժողովի եւ նրա ենթահանձնաժողովների աշխատաձեւերի մշակման նպատակով, սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 2 ամիս անց, կստեղծվի աշխատանքային խումբ՝ երկու արտգործնախարարների դեկավարությամբ: Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում այդ աշխատաձեւերը կիաստատվեն նախարարական մակարդակով»: Այսինքն՝ մշակվելիք աշխատաձեւերի հրապարակումից հետո նոր միայն պարզ կդառնա, թե ինչպես կարող են ձեւավորվել ենթահանձնաժողովների օրակարգերը, ինչ թենաներ՝ ինչպիսի ձեւակերպումներով կարող են դառնալ քննարկման առարկա: Ուստի սխալ է հայտարարել, որ պատմական հարթությամբ գրադարձ ենթահանձնաժողովը քննարկելու է Ցեղասպանության հարցը, ինչպես պնդում են թուրքերը, քանի որ ստեղծվելու է մանեւրելու լայն դաշտ, ու հայկական կողմը պետք է ձգտի այդ ամենը տանել իրեն ձեռնտու ուղղությամբ:

Արձանագրության մեջ պատմական հարթությամբ զբաղվող ենթահանձնաժողովի վերաբերյալ ծեւակերպումը բավական լայն է ու թույլ է տալիս կատարել տարբեր մեկնաբանություններ. «Իրականացնել երկու ժողովուրդների միջեւ փոխվստահության վերականգնման ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի եւ արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկմերի ծեւակերպման համար»: Մեր կարծիքով՝ երկու ժողովուրդների միջեւ փոխվստահության ուղղված քայլերից կարող է լինել հենց Ցեղասպանության հետեւանքների վերացումը, որոնք կարող են բազմաթիվ լինել: Օրինակ՝ որպես Ցեղասպանության հետեւանք կարելի է դիտարկել պատմական Հայաստանի տարածքում մշակութային ժառանգության կործանումը. այդ տարածքների հայկական եկեղեցիները մինչ օրս համապատասխան կառույցներում գրանցված չեն որպես հայկական եկեղեցի, չեն պատկանում Հայ Առաքելական եկեղեցու Պոլսի պատրիարքարանին: Ի դեպ, արձանագրության մեջ հստակ նշվում է, որ կողմերը պարտավորվում են «աշխատանք տանել երկու կողմերի մշակութային ժառանգության պահպանման նպատակով»: Ցեղասպանության հետեւանքների վերացման շարքում կարելի է դիտել նաև այն, որ անհրաժեշտ է համապատասխան միջավայր ստեղծել, որպեսզի Ցեղասպանության տարիներին իրենց արմատից բռնի հեռացված, ուժացված հայերի սերունդները կարողանան վերագտնել եւ բացահայտ տեր կանգնել իրենց իրական եթնիկ ինքնությանը:

Բացի այդ, «պատմական հարթություն» հասկացությունը չպետք է միայն սահմանափակվի ցեղասպանության հարցով: Կան բազմաթիվ այլ հարցեր, որոնք ուղղակիորեն կապված են հայ եւ թուրք հասարակությունների միջեւ վստահության կորստի հետ, որի ուղղությամբ էլ հենց նախատեսվում է աշխատանքներ կատարել: Այդ ամենի համատեքստում չի բացառվում, որ ի հայտ գան Օսմանյան կայսրության եւ Թուրքիայի պատմության լավ չլուսաբանված էջեր, արխիվային այնպիսի փաստաթղթեր, որոնք ցույց կտան նաև հանրապետական Թուրքիայի հակաիրավական նոտեցումը հայերի նկատմամբ: Մասնավորապես, 1920-ականների վերջին հազարավոր հայերի տեղահանությունը եւ աքսորը, 1937–1938թթ. Ղերսինի ապստամբության ճշնան ժամանակ այնտեղ ապաստանած հայերի նկատմամբ պետական խտրական մոտեցումը, 1941թ. կիրառված աննախադեպ գորակոչը, որի թիրախներն էին ոչ մուսուլման ժողովուրդների չափահաս տղամարդիկ, 1942թ. գործածության մեջ դրված «Ունեցվածքի հարկը», որի հետեւանքով կործանիչ հարված հասցվեց հայկական գործարար խավին, Թուրքիայի

Յանրապետությունում տարբեր տարիներին անցկացված «գաղտնի մարդահամարները» եւ այլն:

Արձանագրություններում շոշափվում է արխիվների եւ դրանց ուսումնասիրման հարցը: Անդրադառնալով հատկապես թուրքական արխիվներին՝ հարկ ենք համարում կատարել հետեւյալ դիտարկումները: Թուրքական տարատեսակ արխիվների արդեն միայն հրապարակված փաստաթղթերի ճիշտ մեկնաբանման եւ կիրառման դեպքում հնարավոր է դրանք գործածել թուրքական կողմի դեմ: Օրինակ՝ երիտրուրքական պարագլուխները Թալեաթի եւ Ենվերի հրամանները եւ նամակագրությունը, որոնք առնչվում են հայ որբ Երեխաների բռնի իսլամացմանը, նույն Թալեաթի հրահանգները բռնի իսլամացված հայերի թվաքանակի, աշխարհագրական տարածման եւ այլ հարցերի մասին: Սակայն, միեւնույն ժամանակ, պետք է զգույշ լինել եւ տարբերել այն սահմանը, որից այն կողմ կարող են սկսվել գիտական երկարատեւ քննարկումները, որոնց մեջ էլ հենց ցանկանում են ներքաշել հայկական կողմին: Արխիվների հետ կապված հաջորդ հարցն այն է, որ ըստ տարբեր, այդ թվում եւ թուրքական աղբյուրների, Թուրքիայի արխիվները բազմիցս ենթարկվել են զտման, եւ ոչնչացվել է վտանգավոր փաստաթղթերի մեջ մասը: Միգուցե այդ է պատճառը, որ թուրք պաշտոնյաներն այդքան վստահ հայտարարում են, թե իրենց արխիվները բաց են:

Քննադատության է ենթարկվում նաև այն դրույթը, համաձայն որի՝ պատմական հարբությամբ գրադպող ենթահանձնաժողովի աշխատանքներին կարող են մասնակցել օտարերկրյա մասնագետներ: Սակայն արձանագրություններում օտարերկրյա մասնագետներին ներգրավելու մասին հստակ նշված է. «Ըստ անհրաժեշտության, միջազգային փորձագետները կմասնակցեն ենթահանձնաժողովների աշխատանքներին»: Իսկ անհրաժեշտությունը կորոշվի աշխատաձեւերում, որտեղ կողմերից յուրաքանչյուրը կունենա որոշիչ ձայն, եւ հարցը կլուծվի երկվող համաձայնությամբ:

Վերջում հարկ է նշել, որ միջկառավարական հանձնաժողովի գաղափարը հայկական արտաքին քաղաքականության օրակարգում նոր չի ի հայտ եկել: Մասնավորապես, 2005թ. Թուրքիայի վարչապետ Էրդողանը նամակ էր հղել նախագահ Ուրբերտ Քոչարյանին՝ առաջարկելով ստեղծել պատմաբանների հանձնաժողով եւ քննարկել Ցեղասպանության հարցը: Իր պատասխան նամակում նախագահ Քոչարյանն ասել էր, որ նախ պետք է հարաբերություններ ստեղծել, իսկ հետո՝ միջկառավարական հանձնաժողով, որը կարող է անդրադառնալ տարատեսակ հարցերի: Սա թույլ է տալիս ենթադրել, որ նման նոտեցումը Հայաստանի որդեգրած սկզբունքային դիրքորոշումների գինանոցի տարբերից է:

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՐՈՆԱՓՈԽՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. ՀԱՅԱԽՈՍ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐ Սերգեյ Վարդանյան

Օսմանյան կայսրությունում տարբեր դարերում մահմեդականացված հայերի մասին շատ քիչ է գրվել: Գիտնականները հաճախ շրջանցել են այդ թեման կամ էլ բավարարվել միայն կրոնափոխության որոշ փաստեր արձանագրելով: Անշուշտ, այստեղ մեծ էր Թուրքիայի իշխանությունների դերը, որոնց հաճո չէր իրենց հապատակների քրնի մահմեդականացման մասին նյութերի հրապարակումը: Կարեւոր հանգամանք էր նաև հայ իրականության մեջ տիրող այն մտայնությունը, թե կրոնափոխներն այլեւս հայ չեն: Նույնիսկ «Մերու Դայաստանի» թերթում քննարկվում էր այն հարցը, թե կաթոլիկ եւ բողոքական հայերին կարելի՞ է հայ համարել: Ի պատասխան, հայ մեծանուն գրող Ռաֆֆին 1880թ. «Մշակում» գրում է. «Երկրագնդի վրա թե՛ քաղաքակիրը եւ թե՛ վայրենի ազգերի մեջ չկա եւ չի եղել մի ազգություն, որ մեկ եկեղեցու պատկաներ: ...«Մշակի» մեջ կարող են գրել որպես լուսավորչական, այնպես էլ կաթոլիկ, բողոքական, մահմեդական եւ հոլուադավան հայերը, նա ազգային օրգան է եւ ոչ՝ եկեղեցական: ...Մենք մեկ ազգի որդիներ ենք, մենք միենմույն ընտանիքի զավակներն ենք: ...Կաթոլիկությունը, բողոքականությունը եւ մինչեւ անգամ մահմեդականությունը չեն գրկում հային հայ լինելուց...»:

Մեծ եղեռնի տարիներին Թուրքիայում բազմապատկվեց քրնի կրոնափոխված հայերի թիվը: Նրանց մեջ էր նաև արեւմտահայ նշանավոր գրող Երվանդ Օտյանը, որը տարագրվելով, Դալեպից Դամասկոս կեսանապարհին գտնվող Դամա քաղաքում, Տեր-Զորի սարսափելի ջարդերի օրերին առերես իսլամություն է ընդունել: Նա իր «Անիծեալ տարիներ» խիստ արժեքավոր հուշագրության մեջ գրում է, որ Դամա հասած գաղթականների թեկորների մեջ կային վեց քահանա եւ երկու ավետարանական պատվելի, որոնց ծերակալելով՝ թուրքերը արարական անապատներ քշելու սպառնալիքով ծեռնամուլս են լինում անհովիվ մնացած հայերի կրոնափոխությանը, եւ 5.000 հոգի առերես կրոնափոխվում է: Մեւ ծովի ափից՝ Տրապիզոնի վիլայեթից, Դամա էին հասել, ինչպես գրում է Ե.Օտյանը, «30-ի չափ սամսոնցի տարագիր կիներ, որոնք հազար ու մեկ չարչարնքներէ ետքը եկած ինկած էին հոն: ...Այդ խեղճ կիմերում պատմութիւնը

սրտածնլիկ էր: Յազիւ թէ Սամսոնէն մեկնած՝ զիրենք բաժնած էին իրենց ամուսիններէն, եղբայրներէն ու գաւակներէն: ճամբան բուրքերն ու քիրտերը առեւանգած էին իրենց մանկամարդ ու գեղանի հարսներն ու աղջկները: Յետոյ մէկ քանի անգամներ կողոպտուած էին: ...Այդ խեղծ կիները այսպէս քանի մը ամիս լեռնէ լեռ տարուելով՝ բերուած էին Յալէպ ու անկէ ալ Յամա: Իրենցմէ շատերը յոգնութենէ, տառապանքէ, անօթութենէ ու հիւանդութենէ մեռած էին ճամբան: ...Սամսոնցի կիները մուրացկանի կերպարանքով հասած էին Յամա: Գալով սամսոնցի էրիկմարդերուն, եւ ոչ մէկէն կարելի եղած էր լուր առնէլ: Յաւանօրէն ամէնքն ալ ջարդուած էին իրենց կիներէն բաժնուելէ ետքը:

...Իթիհասի կողմէ պատրաստուած էին հազարաւոր խնդրագիրներ, որոնց վրայ պէտք էր միայն աւելցնել իին ու նոր անունները եւ ստորագրել, որուն փոխարէն իրենց կը տրուէր թուլքի կտոր մը, որուն վրայ իսլամական անունը եւ թիւ մը կար: ...Ամէնէն դժուարը եղաւ սամսոնցի կիներուն իսլամացումը: Ասոնք մինչեւ վերջին վայրկեանը մերժեցին հաւատափոխ ըլլալ եւ պատրաստակամութիւն յայտնեցին անապատը տարագրուելու: ...Վերջապէս, մէջ դժուարութեամբ կրցանք զիրենք համոզել: ...Եւ օրերով իրենց լաց ու կոծը չդադրեցաւ»:

Մեծ եղեռնի եւ նրա հետեւանքներից մեկի՝ բռնի կրոնափոխված հայերի նասին հրապարակավ խոսելու արգելանքի պատճառով տասնամյակներ շարունակ Թուրքիայի հայ մտավորականներն ու գիտնականները չին կարողանում արտահայտվել:

Եվ ուրախալի է, որ բռնի մահմեղականացված հայերի նասին վերջին տարիներս հայկական եւ թուրքական մամուլում բազմաթիվ հրապարակումներ եղան: Ցավոք՝ ուշացած, քանզի մի քանի տասնամյակ ձգված լրությունը անդառնալի կորուստներ պատճառեց: Շատ կրոնափոխվածներ, որ պահպանել էին հայերենը եւ իրենց ծագման մասին հիշողությունը, ԽՄՀՄ – Թուրքիա փակ սահմանի պատճառով կտրվելով Յայաստանից եւ Վրաստանի հայաբնակ շրջաններից, մոռացան մայրենի լեզուն եւ հեռացան իրենց արմատներից: Այդ ընթացքում թուրքական քարոզչությունը իր սեւ գործն էր անում՝ ստեղծելով հայի բացասական կերպար, կեղծելով պատմությունն ու մահմեղականացված հայերի անցյալը: Թուրքիայի հայ հոգեւորականներն էլ, իրենք լինելով իրավագուրիկ վիճակում, ոչ միայն չին կարող օգնության ծեռք մեկնել գավառներուն ու լեռնային հեռավոր գյուղերում, այս ու այնտեղ ծվարած կրոնափոխ հայրենակիցներին, այլեւ անգան նրանց նասին բարձրածայնել, եւ միանգամայն անսպասելի էր, որ Կ.Պոլսի Յայոց պատրիարք, ամենապատիվ Տ. Սեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը ԱՄՆ կոնգրեսական պատվիրակության հետ 2007թ. մայիսի

30-ին պատրիարքարանում հանդիպման ժամանակ, իիշեցմելով, որ Մեծ Եղեռնի տարիներին մեկ ու կես միլիոն «հայ բնակիչներ բնաջնջության», նշեց, որ «Պետք չէ մոռնալ նաեւ, որ տեղահանութեան ընթացքին, տեղահան ըլլալէ փրկուելու համար, մեծ թիւով հայեր մահմետականութիւնը ընդունեցին: Մենք զանոնք եւս մեզմէ կը նկատենք, քանի որ, նոյնիսկ եթէ տարրեր կրօնի մը անցած են, հայերէն կը խօսին եւ հայ մշակոյթը կ'ապրին»: Կարծում ենք, որ պատրիարքի ասածը կարող է տարածվել նաեւ 18-րդ դարում բռնի կրոնափոխված համշենահայերի այն հատվածի վրա, որը պահպանել է հայերենը:

Իսկ որքա՞ն է նրանց թիվն այսօր Թուրքիայում:

Թուրքական իշխանությունները թեեւ արտաքուստ ցույց են տալիս, որ Թուրքիայում բոլորը թուրք են, իրականում, ներքուստ անհանգիստ են եւ իրենք էլ են փորձում պարզել երկրում բնակվող ազգերի իրական խճանկարը: Թուրքիայի Կայսերի (Կեսարիա), Մալաթիա եւ Էլազըր (Խարբերդ) քաղաքների համալսարանների գիտնականները, Ազգային անվտանգության խորհրդի հանձնարարությամբ, ուսումնասիրելով Թուրքիայի ազգային փոքրամասնությունները, 2000թ. իրենց կազմած գեկուցագրում, մյուս ազգային փոքրամասնությունների՝ հայերի, քրդերի, արաբների, լազերի կողքին նշել են Ոիզեի եւ Արդվինի նահանգների 13.000 համշենցիներին: Այնինչ, մեր մոտավոր հաշվումներով, միայն Արդվինի նահանգի Խոփայի գավառի 32.209 (2007թ.) բնակիչներից շուրջ 20.000-ը համշենցի է: Նրանք բնակվում են Խոփա քաղաքում (բնակչությունը՝ 17.400 մարդ), ինչպես նաեւ մի շարք գյուղերում:

Քանի որ Թուրքիայում բնակավայրերի անվանափոխությունը դարձել է պետական քաղաքականության քաղադրիչ, ուստի ստիպված ենք փակագծերում նշել նաեւ գյուղերի նախկին անունները՝ Քոյունջուլար (Զալունա, Զալօնա), Բաշորա (Խիզի, Խիզօրա), Չավուշլու, Յոլդերե (Յուրփիջի, Ջուրբուջի), Գյումեշլի (Զաղրինա, Զարգինա), Բալըրլը (Ձենիդ), Յենդեք (Գարջի), Էշմեքայ (Արդալա), Չիմենլի, Փընարլը (Անչիօղ, Անչօրօխ), Քեմալիկաշա (Մաքրիյալ) եւ համանուն գյուղախումք՝ Քայա (Նրա կազմում հետեւյալ գյուղակները կամ թաղամասերը՝ Շանա, Չաքմաղին, Փափաթ, Յալբաշը), Չամուռլու (Չանչախանա, Չանչաղօն), Ուչքարդեշ, Քազինիյե (Վեյի Սարփի), Օսմանիյե, Քարաօսմանիյե (Խեձէլօն), Քյոփիրուջու Ղերեիչի (գյուղախումքը 2000թ. ուներ 4.129 բնակչի, իսկ 2007-ին՝ 4.597):

Դամարյա 2.000 կրոնափոխ, բայց հայախոս համշենցիներ են բնակվում նաեւ հարեւան Բորչկայի գավառի (բնակչությունը՝ 24.133) Բորչկա ավանում եւ Չիֆթեկընար (Չիսալա), Գյուրեշեն (Բէյլիկան, Բէղլէվան, Բաղլիկօն), Յեշիլքյոյ (Գէնչէր, Մանասթըր) գյուղերում:

Մեր ունեցած տեղեկություններով՝ Սաքարյա նահանգի Աչմաբաշը գյուղում եւս խոսում են հայերեն՝ Խոփայի խոսվածքով: Այսօր այդ նահանգի Քարասու եւ Քոջալի, ինչպես նաև հարեւան Դյուզջեն նահանգի Աքչաքոջա գավառներում կան մահմեղական համշենցիների մի շարք գյուղեր՝ Փարալը (հիմնականում բաշ-համշենցիներ, նաև խոփացի համշենցիներ. բնակչութեան 1930-ական թթ., նախկին հունական գյուղ է, կա հունական եկեղեցի), Քեսքանեփիղնարը, Աքքաշ, Քարափելիթ, Ենիդաղ (այժմ՝ Օրթաքյոյ), Լահանա, Քարաթավուք, Ենիջեն, Շեմշին (այժմ՝ Արմութլու) եւ Գեղամ (այժմ՝ Քովուքփելիթ), որը նախկինում քրիստոնյա համշենցիներով էր բնակեցված: Ըստ վկայությունների, շրջակա գյուղերի այլազգի բնակչութեան վերոհիշյալ գյուղերի համշենցիներին էրմենի են ասում:

Այսպիսով, միայն Արդվինի, Սաքարյայի եւ Դյուզջեի նահանգներում բնակվող հայախոս մահմեղական համշենցիների թիվը կրկնակի գերազանցում է Թուրքիայի Անվտանգության խորհրդին ներկայացված գեկուցագրի տվյալները, այնինչ բազմաթիվ հայախոս համշենցիներ են բնակվում նաև այլ նահանգներում եւ Ստամբուլում, որտեղ մեկնում են ուսման եւ աշխատանքի նպատակով եւ երբեմն հասնում բարձր պաշտոնների:

Ամփոփելով նշենք, որ այսօր Թուրքիայում, մոտավոր հաշվումներով, բնակվում է իսլամ դավանող շուրջ 30-35 հազար հայախոս համշենցի: Նրանցից շատերը ցանկանում են պատասխան գտնել իրենց եւ զավակներին հուզող այն հարցին, թե ով են, ինչ ազգի են պատկանում: Մենք պետք է օգնենք նրանց ճիշտ կողմնորոշվելու: Իսկ իրենք առայժմ գտել են յուրօրինակ, դիվանագիտական լուծում. քանի որ ծագումով հայ են, բայց քրիստոնյա չեն, մահմեղական են, բայց թուրք չեն, ուստի իրենց չեն անվանում հայ կամ թուրք, այլ՝ համշենցի (հօմշեցի, հօմշենցի), այսինքն՝ ծագումով Ոիզեի նահանգի Շամշեն գավառից:

## ՎՐԱՑԱՑԱԾ ԴԱՅ ԿԱԹՈԼԻԿՆԵՐ

### Արեստակես Սիմավորյան

Տարբեր պատճառներով հայագիտական ուսումնասիրությունների շրջանակից գրեթե դուրս են մնացել վրացացած հայ կաթոլիկները:

Դակառակ պատմական այն իրողությանը, որ ներկայիս հայ կաթոլիկների երկրորդ շերտը Սամցխե-Զավախը է եկել Արեւմտյան Հայաստանից, վրացական կողմն անընդհատ փորձում է նրանց ներկայացնել որպես «նախկին վրացիներ», ինչը վրացական պատմագիտության պաշտոնական մոտեցումն է դեռ 19-րդ դ. 60-ական թվականներից:

Դեռևս 1860–1880-ական թվականներին վրաց եկեղեցու ներկայացուցիչները գրեթե Վրաստանի ողջ տարածքում, այդ թվում Ախալցխայի եւ Ախալքալաքի գյուղերում, հայ կաթոլիկներին դավանափոխ ամենու նպատակով մեծ շարժում էին ծավալել: Թիրախային խումբ էին ընտրվել Ախալքալաքի շրջանի Բավրա, Խուլգումո, Կարտիկամ եւ Տուրցիս գյուղերի հայ կաթոլիկները: Երբեմնի վելցիները մերժել էին վրաց հոգեւորականության պահանջը: Ինչպես վկայում է Երվանդ Լալայանը, 1886թ. գավառապետ Սմբարով իշխանը բնակչության շրջանում աշխարհագիր անցկացնելու ժամանակ փորձել է նրանց գրանցել որպես վրացիներ, սակայն ընդամենը մի տուն էր վախից վրացի գրվել, իսկ մյուսներն ասել էին, որ հայեր են:

«Այդ ընտրությունը պատահական չէր: Քարոզարշավի կազմակերպիչները վերոհիշյալ գյուղերում հաջողություն էին ակնկալում: Նրանք կարծում էին, թե այդ գյուղերի բնակչիները, մասնակիորեն թրքախոս ու կաթոլիկ լինելով, հեշտությամբ կարող էին հակադրվել հայ առաքելականներին եւ ընդունել վրացադավանություն... Չեր տրվում որեւէ բացատրություն, թե ինչու էին վելցիները թուրքերներին գուգահեռ պահանել հայերենը, հայկական անունները, կենցաղը, ծիսական արարողակարգը, հայկական ինքնագիտակցությունը եւ ինչ հիմքեր կային այդ մարդկանց «վրացի վերաօծելու» համար», – նշում է պատմաբան Ա. Մելքոնյանը:

Նույն բանը կրկնվեց նաեւ մենշեւիկյան իշխանության ժամանակ: Ազգափոխման եղկելի երեւույթի մասին ժամանակին արտահայտվել է Պողոս Աբելյանը Ախալքալաքի հիմնահարցի մասին զեկուցագրում. «...ինչպես հայախոս հայ կաթոլիկներին (ներկայում՝ 7-8 հազար), այնպես էլ տաճկախոս հայ կաթոլիկներին (թվով մոտ 9000) վրաց

մենշելիկյան կառավարության օրոք ու հովանավորությամբ եւ Վրաց մամուլի զգալի մասը եւ ինքը՝ մենշելիկյան կառավարությունը, զանազան խոստումներով ու ահարեկումներով, հայտարարեցին վրացի կաթոլիկներ... Դայ կաթոլիկների մի մասը՝ անգիտակից, աղքատ, ճնշված մասը, ինքը նույնպես ինքնապահպանման բնագրից դրդված, իրեն վրացի սկսեց համարել, եւ շատերն իրենց ազգանունները վերածեցին -ձե, -շվիլի վերջապարությունների: Բայց մյուս մասը կանգ չառավ մենշելիկյան բլոկի հալածանքների դեմ եւ իր մարդկային արժանապատվության դեմ ոչինչ չարեց՝ նա իրեն հայ է համարել, հայ էլ համարում է»:

Մինչեւ Խորհրդային Միության փլուզումը եւ դրան հաջորդող տարիներին վրացական մի քանի պարբերական մշտապես փորձել են հայ կաթոլիկներին համարել «հայացած վրացիներ»: 1990-ական թթ. այս միտումը շարունակվեց հատկապես վրացական ազգայնականության դրսեւորմանը գործակի իրոշակի խնդիրներ հարուցեց նաեւ գործնական հարթությունում:

Թեեւ վրաց հոգեւորականության եւ իշխանությունների՝ հայ կաթոլիկներին դավանափոխ անելու ծրագիրը տապալվեց, այդուհանդերձ, այսօր էլ վրացի մի շարք պատմաբաններ, առանց ծանրակշիռ փաստարկների, հակագիտական մոտեցումներով փորձում են առաջ քաշել այն թեզը, թե Ախալքալաքի գյուղերի հայ կաթոլիկները նախկին վրացիներ են, որոնք հետագայում հայացել են:

Վերջին 10 տարում հայ կաթոլիկների մեջ «Վրացի» փնտրելու ապարդյուն ջանքերն արտացոլվել են մի շարք հոդվածներում՝ տգիտության աստիճանի սխալներով:

Այսպես, 1999թ. պատմական գիտությունների դոկտոր Գուրամ Մամուլիան մասնավորապես նշում էր, որ Ախալքալաքի շրջանի ութ թրքախոս «Վրացի» կաթոլիկ գյուղերի (Խուլգումո, Կարտիկամ, Տուրցխ, Կուլիկամ, Բավրա եւ այլն) բնակիչներն իրենց հայերի շարքին են դասել:

Ինչպես երեւում է, հեղինակն անտեղյակ է որոշ հարցերում. նախ՝ Կովկասում ոչ թե կաթոլիկներ, այլ հայ առաքելականներ են բնակվում: Եվ երկրորդ՝ Ախալքալաքի շրջանում ընդամենը 6 հայ կաթոլիկ գյուղ կա, որոնցից միայն չորսն են թրքախոս եղել, այն էլ՝ մասամբ, եւ վրացական ծագում չեն ունեցել:

2005թ. ոմն Մանանա Զավախաշվիլի, հղում կատարելով վրացական պատմաբաններին, նշում է, որ 1893թ. ցարական իշխանությունների հրամանով վրաց կաթոլիկ եկեղեցին հայտարարվել է հայկական: Այս տեղեկությունն էլ հիմք է հանդիսացել մի նոր եզրակացության, այն է. «Վրացի կաթոլիկներին կնքել են հայ կաթոլիկ հոգեւորականները՝ տալով

նրանց հայկական անուններ, ինչի պատճառով սկսվել է վրաց կաթոլիկների հայացման գործընթացը»:

Վրաց պատմաբանների մյուս նպատակը հայ մասնագետներին (որոնք առկա փաստական նյութի քննությամբ ներկայացնում են վրացացած հայ կաթոլիկների խնդիրները) հակադարձելն է:

Բնականաբար, այսօր անօգուտ է խոսել մի հարցի (հայացած վրացիների) շուրջ, ինչն իրականում գոյություն չունի: Դրա արմատական դրդապատճառը հայ մասնագետներին իրենց առաջ քաշած արհեստաձին խնդիրների մեջ ներքաշելն է, ինչն էլ գիտակցաբար չի ընդունվում վերջիններիս կողմից: Անհասկանալի է, թե որտեղ են «հայացած» վրացի կաթոլիկները, որոնց փորձում են «պեղել» վրաց պատմաբանները:

Դայտնի է, որ հարավկովկասյան հանրապետությունների մեջ Վրաստանն էթնիկ բազմազանությամբ, թերևս, առաջին տեղում է, որտեղ բնակվում են տարբեր դավանանքների եւ կրոնների ներկայացուցիչներ:

Խորհրդային Միության կազմի մեջ մտնելուց հետո Վրաստանի էթնիկ փոքրամասնությունները շատ շուտ բռնեցին ուժացման ճանապարհը. այդ գործընթացներին կուլ գնաց փոքրաթիվ ուղիների, հույների, օսերի, ասորիների, հրեաների, հայերի ու այլ ազգությունների մի մասը:

Վրացացած հայերի մի մասն էին կազմում նաեւ Սամցխե-Զավախիքի, Գորիի ու Քութայիսի բնիկ հայ կաթոլիկները: Դանաձայն հայ կաթոլիկների վրացացման հանգամանքներին խորագիտակ Պիոն Հակոբյանի՝ նրանց վերջնական վրացականացումը տեղի ունեցավ խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին:

Քանի որ վրացացած հայ կաթոլիկների աշխարհագրական սահմանները բավական ընդարձակ են եւ ներառում են ամբողջական գյուղեր, անդրադառնանք դրանցից մի քանիսին:

**Վարդավ:** Ասպինձայի կազմում գտնվող գյուղ է, որը հարեւան է հայ կաթոլիկ Վարեւան եւ Ալաստան գյուղերին: Բնակչությունը բնիկ հայեր էին: Դայտնի է, որ 17-18-րդ դր. երկրամասը մահմեղականանում էր: Մահմեղականացմանն ընդդիմանալու համար արեւմուտքից եկած եւ այս կողմերում հաստատված կրոնական քարոզիչների միջոցով ընդունել են կաթոլիկություն, արդյունքում՝ կաթոլիկացան վերոհիշյալ եւ ներկայումս անմարդաբնակ Բնելա գյուղերի հայ բնակիչները: Նետագայում վարգավցի հայ կաթոլիկները, պայմանավորված վրացիների ներհոսքով, «զոհաբերել» են մայրենի լեզուն:

Ե.Լալայանը, որը ժամանակին բավական հետաքրքիր հետազոտություն էր կատարել Զավախիքի գյուղերում, նշում է. «Վարդավցիք եւ

խզարավրացիք բնիկներ են: Մրանը վաղուց մոռացած են իրենց մայրենի լեզուն եւ խոսում են վրացերեն: Եվ թեպետ ընդունած են վրացական սովորություններ, բայց եւ այնպես ընտանեկան կյանքը հայկական է»:

Դա հաստատում են նաեւ սկզբնաղբյուրները: Դամաձայն 1886թ. անցկացված ընտանեկան ցուցակագրման՝ Վարգավ գյուղի կաթոլիկների լեզուն եղել է վրացերենը, սակայն էթնիկ պատկանելության դիմաց գրվել է հայ: Օրինակ՝ Լազարովները, Դարթաները, Թարխանովները, Թամազովները, Չաբերիծեները: Միայն Դավլաշերիծեն ընտանիքն է իրեն վրացի համարել:

Միանգամայն պարզ է դառնում, որ Վարգավի բնակչության մեջ հատվածի էթնիկ ինքնագիտակցությունը դեռեւս պահպանվում էր: Դաշվի առնելով այն, որ այդ մարդահամարի ժամանակ ճնշումներ են կիրառվել հայ կաթոլիկների վրա՝ տարբեր միջոցներով փորձել են նրանց վրացի գրանցել, ինչպես Սմբաթովի պարագայում էր, ակնհայտ է դառնում, որ Վարգավի բնակչության գերակշռող մասն ընդդիմացել է վրացի աշխարհագիրներին եւ ներկայացել որպես հայ: Նույն պատկերն էր նաեւ Խզարավրացում:

Վարգավ գյուղի հարեւան հայ կաթոլիկները նշում էին, որ մինչեւ 1930-ական թթ. վարգավցիները խոսում էին հայերեն:

Խնդիրն այն է, որ վարգավցիների եւ Խզարավրացիների կենցաղում հայերենի իմացությունը «տեղ չուներ»: Ե.Լալայանի վերոնշյալ մեջբերումը հայերենին չտիրապետելու մասին (1890-ական թթ.) համապատասխանում է իրականությանը: Պարզապես հարեւան գյուղերի բնակիչները չեն ըմբռնել, որ նրանց լեզվի իմացությունը, այն էլ՝ առանձին արտահայտություններով, կապված էր Եկեղեցական ծիսական արարողությունների հետ, որոնք, բնականաբար, կատարվում էին հայերենով, չնայած սկզբում լատինածես էին: Այլ հարց է, թե արդյոք վրացերենին գուգահեռ ունեին «գաղտնի լեզու»՝ հայերենը, որով շփվում էին միայն տան անդամները:

Վարգավցիները, ըստ Վարեւանի եւ Ալաստանի տարեց բնակիչների, հաճախում էին իրենց գյուղերի Եկեղեցիներ, տարբեր տարիներին Խերթվիսից եւ այլ վայրերից Վարգավում հաստատվել էին նաեւ մի քանի վրացական ընտանիքներ, որոնք խառնվել էին տեղաբնիկներին: Ի դեպ, 1910-ական թթ. Վարգավում հովվություն էր անում Կոստանդինոս Շեշաբերիծեն, որն ազգությամբ վրացի էր, եւ դժվար թե նրա օրոք ծիսական արարողությունները կատարվեին հայերենով: Օբյեկտիվորեն հայ կաթոլիկների վրացացման նախադրյալները ձեւավորել են հատկապես լատինածես եւ վրացամետ հայ հոգեւորականները:

Պատահական չէր, որ հետագայում վրացական իշխանությունները Վարդավ գյուղը մտցրին նորաստեղծ Ասպինձայի շրջանի մեջ: Գյուղն ընդամենը երեք-չորս կիլոմետր է հեռու հայկական գյուղերից: Վրացիներն այդպիսով իրենց հսկողության տակ վերցրին այն՝ կտրելով հայկական միջավայրից, ինտեգրելով վրացականին:

Քանի որ Ասպինձայի շրջանում հիմնականում կենտրոնացված էին վրացական գյուղեր, բացառությամբ Դամալայի, սահմանազատումն աշխատեց հօգուտ վրացիների, եւ վարդավցիների մոտ կրկին տիրապետող դարձավ էթնիկ վրացի լինելու հանգանաճը: Ըստ նույն հայ կաթոլիկ-ների՝ այսօր քչերն են ընդունում, որ հայ են, նույնիսկ մի քանի ընտանիքների մայրեր, որոնք սերում են հարեւան հայ կաթոլիկ Ալաստան գյուղից եւ ամուսնացել էին դեռ 1920-ական թթ.: Մի խոսքով՝ այստեղ բնակվում են վրացախոս հայ եւ այլ վայրերից այստեղ տեղափոխված վրացի կաթոլիկներ: Յավելենք, որ այսօր Վարդավ գյուղը ներկայացված է որպես վրացի կաթոլիկների համայնք:

**Խզաբավրա:** Պատմական փաստերի համաձայն՝ այս գյուղի բնակիչներն առաքելադավան էին եւ Օսմանյան կայսրության օրոք, իսլամացումից խուսափելու համար, ընդունել են կաթոլիկություն: Ազգային եկեղեցուց անջատվելու հետեւանքով խզաբավրացիները մեկուսացել էին հայության հիմնական զանգվածից, ինչը եւ նրանց վերջնականապես վրացախոս դարձրեց:

Խզաբավրացիների մեջ ներքին ամուսնությունների սովորությ եւս մեծ տեղ ուներ, ինչը յուրահատուկ էր նաև հայ կաթոլիկներին ու ծեւավորվել էր դավանանքային հիմքի վրա: Այն վերջիններիս հեռու էր պահում վրաց ուղղափառներից, սակայն ժամանակի ընթացքում այդ սովորությն այլեւս տեղայնական չէր: Անցյալում խզաբավրացիների հայ լինելու հիշողությունները կամ թույլ արտահայտված ազգային ինքնագիտակցությունը հանգեցրեց նրան, որ խնամություն էին անում հայ կաթոլիկների հետ, ինչը չնչին տոկոս էր կազմում եւ այսօր ընդհանրապես բացակայում է: Նրանք եւս ժխտում են, որ հայ են: Պատահական չէ, որ վերջին տարիներին խզաբավրացիներն ընդդիմացել են մի շարք վրացական թերթերում իրենց հայկական ծագման վերաբերյալ հնչած կարծիքներին:

2007թ. «Ասավալ-դասավալի» վրացալեզու պարբերականի թիվ 13-ում տեղ էր գտել 87-ամյա խզաբավրացի Ստեփանե Մամուկաշվիլու հոդվածը, որտեղ նա ժխտում էր, որ իրենք հայկական ծագում ունեն՝ բերելով արիեստածին փաստարկները. «Այն ժամանակ, երբ կաթոլիկ խզաբավրացիները ժամերգություն-պատարագները այլ գյուղերում էին կատարում,

այդ ծեսի կատարումը հայ կաթոլիկ քահանաները յուրացրին, որոնք մեծ չարություններ կատարեցին: Գրել-կարդալ չիմացող վրացիներին, երեխային կնքելու ժամանակ, անունը հայերեն էին գրում. Վելիջանաշվիլիներին Վելիջանով գրեցին, Թամազաշվիլիներին՝ Թամազով, Սամուկաշվիլիներին՝ Սամուկով եւ այլն: Երբ Խոհաբավրայում եկեղեցու կառուցումն ավարտվում էր, քարի ու փայտի վարպետները հայեր էին, որի պատճառով այդ կաթոլիկ տաճարը ուրիշ շատերի նման հայերին վերագրեցին», – ցավում է պարոն Ստեփանեն:

Խօսաբավրայի կաթոլիկ քահանաները, բացառությամբ Աստվածատուրով Յովիաննեսի (1866թ.), Կոստանդինոս Շեշաբերիձեի (1915թ.) եւ Պաուլո Սիեպամեկիի (1961-1999թ.), գրեթե բոլորն էլ նույն գյուղի հայեր են եղել: Յետագայում վրացամետ լինելու պատճառով իրենց ազգանվան վերջավորությունը փոխել են վրացականով: Օրինակ, այդ գյուղի քահանան սկզբում Վարձելյան էր, հետագայում, պայմանավորված ռուսահպատակությամբ, դարձել էր Վարձելով, այնուհետև՝ Վարձելաշվիլի: Ահա թե ինչ են պատճում սկզբնաղբյուրները նրա մասին. «...կաթոլիկ հայ էր եւ Վարձելեան եւ հայ անունով էլ քահանայ ձեռնադրուեց, բայց այժմ նոյն մարդը շապիկը փոխելով, վրացի է անուանում իրան» («Մշակ», 1900, N124, էջ 2):

Եվ եթե հայեր չեին խօսաբավրացիները, ապա ինչպե՞ս կարող է պատահել, որ Պոլսի, Կովկասի եւ Ալաստանի հայ կաթոլիկներն այդ գյուղի եկեղեցին հիմնովին վերակառուցելու համար գումար հանգանակեցին, երբ դրա կարիքն այնքան շատ ունեին իրենք: Վատիկանյան փաստաթղթերում էլ Խօսաբավրան Սամցիս-Զավախչի հայ կաթոլիկ գյուղերի հետ միասին նշվում է որպես հայկական:

Ասպինձայի հայաբնակ Դամալա եւ Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղերի հայ բնակիչները փաստում են, որ երբ նրանց հայ ես ասում, ընդդիմանում են եւ նշում վերը բերված Մամուկաշվիլու տեսակետը: Քչերն են ընդունում իրենց հայկական ծագումը: Ինչպես երեւում է, վրացական ազգանունները հայկականով փոխելու վրաց պատճարանների կեղծ հավաստիացումներն արմատավորվել են խօսաբավրացիների գիտակցությունում, եւ այն փոխանցվում է սերնդեսերունդ:

Առնվազն զավեշտալի է այն, որ եթե վրացի կաթոլիկներին հայացրել էին հայ քահանաները՝ փոխելով նրանց անուն-ազգանունները, ինչպես նշում է Մանանա Զավախաշվիլին, ապա ինչպե՞ս եղավ, որ Խօսաբավրայի կաթոլիկների անունների փոփոխությունից հետո նրանք չհայացան: Յայկական միջավայրը չի մոռանում, որ նրանք հայկական ծագում ունեն եւ մշտապես, շիման ժամանակ, հիշեցնում է նրանց եթնիկ ծագման

մասին. «Մեր մասին ասում են, որ մենք հայ ենք, ես շատ հաճախ եմ լսում այդ մասին», – նշում է վրացի կաթոլիկ մի կին:

Վերջին տարիների վրաց-ռուսական քաղաքական լարվածության համատեքստում ի հայտ եկան նոր իրողություններ: Վրացացած հայերի մի քանի սերունդ վերականգնեցին հայկական ազգանունները<sup>1</sup>: Սակայն մեզ հայտնի չէ, թե արդյոք այդ գործողություններում ներգրավված էր Սամցիս-Զավախսի վրացացած հայությունը, ու թե ինչ շարունակություն կունենա այդ գործընթացը:

Թեեւ փաստեր չունենք, բայց պետք է որ վրացական իշխանությունները (մենշեւիկյան եւ խորհրդային) մշտական ուշադրության կենտրոնում պահեին Սամցիս-Զավախսում եւ ողջ Վրաստանում վրացացած հայության տարբեր շերտերի շրջանում տեղի ունեցող բազմաթիվ գործընթացները: Նրանք գուցե ամեն կերպ փորձել են կասեցնել վերջիններիս ազգային ինքնագիտակցության որեւէ դրսեւորում՝ հետագայում բարդություններից խուսափելու համար:

Որպես ազգային ինքնագիտակցության բռնի արգելակման միջոց վրացական իշխանությունների համար հզոր գործոն է հանդիսանում ուղղափառացումը, քանի որ այդ երկրում ուղղափառ լինելը համագոր է վրացի լինելուն: Եթե Վարգավ եւ Խզաբավրա գյուղերը գերծ են մնում ուղղափառացման հարվածներից, ապա հակառակ պատկերն է Ախալցխայի, Աղիգենի վրացացած հայ կաթոլիկների շրջանում, որոնց դավանափոխման գործընթացը մեծ չափերի է հասնում: Այդ մասին բարձրաձայնել են նաև Վատիկանի ներկայացուցիչները: Իրադրությունն ավելի պատկերավոր նկարագրելու համար մեջբերենք, այսպես կոչված, «վրացի կաթոլիկների» վերաբերյալ մի քանի փաստեր, որի մասին վկայում են հայ տեղաբնիկները:

«Իվլիտայի Աստվածամոր Եկեղեցին, մեր ընտանիքում հաշվում էր ամենազորավորը: Ես դեռ փոքրուց այնտեղ շատ եմ հաճախել, սակայն այն ժամանակ այն հանդիսանում էր կաթոլիկ հայերի Եկեղեցի, եւ վրացիներն այնտեղ չէին էլ գնում: Դե, ինչպես ես իմացել եմ մեր մեծերից, Ախալցխայի շրջանում Իվլիտան, ինչպես նաև Աղիգենում Ռուբեն եւ Արալը, կամ էլ Խիզաբավրան (գյուղ Ասպինձայի շրջանում) եղել են կաթոլիկ հայաբնակ գյուղեր, սակայն ներկայումս նրանք համարվում են կաթոլիկ «վրացական», եւ թե դա ինչպես տեղի ունեցավ, ես մինչեւ հիմա չեմ էլ հասկանում», – ասում է 73-ամյա տիկին Լուսինեն եւ շարունակում, որ «վրաց կաթոլիկ» հասկացություն այս տարածաշրջանում իրականում չկա: Պարզապես նրանք այն հայերն են, ովքեր ժամանակի ընթացքում այս կամ այն պատճառով կամ էլ չդիմանալով վրացիների ճնշումներին՝

«փոխել» են իրենց ազգությունը եւ այժմ արդեն կոչվում են «վրացիներ»։ Այդ պատճառով էլ առանց մեկնաբանելու ուղղափառ վրացիները «վրացի կաթոլիկներին» կոչում են դավաճաններ եւ վերաբերվում են ընդգծված արհամարհանքով։ Իսկ «վրացի կաթոլիկներն» էլ, որպեսզի դուրս գան այս իրավիճակից, ստիպված են առաջնորդվել «Դոռմի պապից էլ կաթոլիկ» ասացվածքով եւ իրենց ձեւացնել ավելի մոլեռանդ ազգայնական վրացիներու։

«Ես ինքս անձամբ ունեմ բարեկամներ, ովքեր այսօր համարվում են վրացիներ, սակայն չէ՝ որ փաստը մնում է փաստ, որ նրանց երակներում հոսում է Վարդանյանների արյունը, եւ ազգանունները փոխելով դարձել են Վարդենաշվիլի, չէ՝ որ չի կարելի փոխել ամեն ինչ», – ասում է Ախալցխայի բնակիչ Կարապետը եւ ավելացնում, որ այդ դեպքից հետո իր եւ իր նոր «վրացի» բարեկամների հարաբերություններն այնքան էլ դրական չեն:- «Ստեղծվել է մի իրավիճակ, որ եթե ուզում ես դառնալ պաշտոնյա կամ կյանքում հասնել ինչ-որ քանի, ուրեմն պետք է դառնաս ոչ միայն «վրացի», այլև ուղղափառ, քանի որ ես ինչքան տեսմում եմ, վրացիներն այժմ փորձում են վերացնել նախկին հայերից ձեւավորված «վրացի կաթոլիկ» հասկացությունը», – նշում է Կարապետը։

Վրացացած հայ կաթոլիկների թեման ուսումնասիրության կարիք ունի, ընդ որում, տարբեր տեսանկյուններից՝ պատմական, եթոնոգերանական եւ այլն։ Այս հարցը կապված է նաեւ մի շարք գործոնների հետ։ Վրաստանի ներսում տեղի ունեցող էթնիկ խմորումները ներկայացվում են բացառապես վրացերենով, որպեսզի ուրիշներն իրենց խնդիրներին հաղորդակից չդառնան։

Սույն խնդրի խորքային ուսումնասիրությունը պահանջում է հստակ եւ գգուշավոր մասնագիտական նոտեցում։ Ի վերջո, սեփական ինքնությունը կորցրած ցանկացած խումբ ունի թույլ կետեր, որոնց միջոցով հնարավոր կլինի պարզել սեփական արմատներին վերադառնալու առավելագույն ցուցիչը։

<sup>1</sup> 2002թ. Վրաստանում անցկացված մարդահամարի տվյալներով՝ այդ երկրում ապրում են 250 հազար հայեր, նաեւ 150 հազար վրացացած, ովքեր խորհրդային իշխանությունների եւ Վրաստանի անկախության առաջին տարիներին, իշխանությունների ճնշման ներքո փոխել են իրենց ազգանունները վրացականով։ Գլխավորապես վրացացել են Թբիլիսիի, Կախեթի շրջանի տասնյակ գյուղեր։ Սամցխե-Զավախքում վրացացել են մեր հիշատակած Վարգավը եւ Խզաքավրան, իսկ Աղջգենի շրջանում՝ Բոլաջուր, Աբասթունան, Արալ, Ուդե գյուղերը։

**Արաքս Փաշայան**

Հայաստանի եւ Հայության դեմ Ադրբեջանի քարոզչությունը, որը ձեւավորվել է Ղարաբաղյան հակամարտության համատեքստում, դարձել է այդ երկրի քաղաքական ռազմավարության ուղենիշներից մեկը, ինչը գուգակցվում է սեփական երկրի նոր կերպարի ձեւավորմամբ: Քարոզչությունն իրականացվում է թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարանի համար հատուկ ընտրված մեթոդաբանությամբ: Արտաքին լսարանի հիմնական թիրախը միջազգային հանրությունն է, որի կարեւոր բաղկացուցիչն իսլամական աշխարհն է: Դիշյալ հարթության մեջ Ադրբեջանը լավագույնս օգտագործում է կրոնական գործոնը, իսկ ավելի ստույգ՝ իսլամական համերաշխության գաղափարը, որն առանցքային նշանակություն ունի մասնավորապես միջազգային իսլամական կրոնաքաղաքական բարձրագույն մարմնի՝ իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) գաղափարախոսական արժեհամակարգում:

1992-ից ի վեր ԻԿԿ գրեթե բոլոր ձեւաչափի հանդիպումներում Ադրբեջանը, որպես կանոն, փորձում է միջազգային իսլամական հանրությանը ներկայացնել Հայաստանից եկող մարտահրավերները: Դրանով Ադրբեջանը ձգտում է ի ցույց դնել, որ իսլամական աշխարհի աջակցության կարիքն ունի՝ Հայաստանի կողմից «գրավյալ» տարածքների բռնազավթումը եւ այնտեղ իրականացվող «հանցագործությունները» կանխելու նպատակով: Իսլամական աշխարհում Ադրբեջանի կողմից իրականացվող շարունակական քարոզչության արդյունքում, որի հիմքում ընկած է ապատեղեկատվության սկզբունքը, միջազգային իսլամական կառույցներն այլեւս ձեւավորել են իրենց դիրքորոշումը Հայաստանի՝ որպես ադրբեջանական մշակութային արժեքներն ու ռեսուրսները ոչնչացնող երկրի մասին:

Ադրբեջանը Հայաստանի դեմ քարոզչությունն իրականացնում է ոչ միայն ԻԿԿ գագաթաժողովներում եւ արտաքին գործերի նախարարների կոնֆերանսներում (որոնցում մասնավորապես վերջին տարիներին, որպես կանոն, ընդունվում է «Հայաստանի Հանրապետության ագրեսիան Ադրբեջանի Հանրապետության դեմ» բանաձեւը), այլ ԻԿԿ ամենատարբեր ձեւաչափի հանդիպումներում: Ասվածի ապացույցը վերջերս՝ 2009թ.

հոկտեմբերի 13-15-ը Բաքվում տեղի ունեցած ԻԿԿ մշակույթի նախարար-ների VI կոնֆերանսն էր, որին մասնակցում էին 45 երկրի մոտ 200 պատվիրակներ ոչ միայն իսլամական պետություններից, այլև միջազգային առանձին կառույցներից, մասնավորապես Եվրոպայի խորհրդից եւ ՄԱԿ-ից: Նշենք, որ ԻԿԿ մշակույթի նախարարների հերթական կոնֆերանսի հրավիրումը Բաքվում պատահական չէր: Բաքուն ԻԿԿ-ի կողմից հոչակվել է 2009թ. իսլամական մշակույթի մայրաքաղաք: Իսկ 2018թ. ԻԿԿ-ն իսլամական մշակույթի մայրաքաղաք կհոչակի Նախիջենանը:

Հոկտեմբերի 13-ին Ադրբեյջանի նախագահն ուղերձով դիմեց իսլամական երկրների մշակույթի նախարարների VI կոնֆերանսի մասնակիցներին՝ նշելով, որ Հայաստանը «գրավյալ» տարածքներում ոչնչացնում է մզկիթներ եւ իսլամական մշակութային հուշարձաններ: Պատահական չէ, որ կոնֆերանսում ընդունված ամփոփիչ հոչակագրում դատապարտվեց Հայաստանի կողմից Ադրբեյջանի գրավյալ տարածքներում պատճամշակութային հուշարձանների «ոչնչացումը», Հայաստանից պահանջվեց կատարել ՄԱԿ բանաձեւերը:

Հատկանշական է, որ նախագահական նստավայրում ընդունելով կոնֆերանսի պատվիրակներին՝ Ի.Ալիեւը «բարեկանության եւ եղբայրության» օրերի շրջանակներում անցկացված կոնֆերանսի աշխատանքները գնահատեց որպես եական ներդրում իսլամական պետությունների համերաշխության եւ նրանց միջազգային դիրքերի ամրապնդման հարցում՝ միաժամանակ բարձր գնահատելով Ղարաբաղյան հարցում ԻԿԿ անդամ պետությունների աջակցությունն Ադրբեյջանին, այդ թվում եւ միջազգային մակարդակներում, մասնավորապես, 2008թ. ՄԱԿ ԳԱ-ում:

Ադրբեյջանի մշակույթի եւ տուրիզմի նախարարի կարծիքով՝ առկա շեշտադրումների առկայությունը նշանակում է, որ իսլամական պետություններն աջակցում են եւ կաջակցեն Ադրբեյջանին ապագայում: Իսկ Ադրբեյջանի հոգեւոր առաջնորդ Ալլահշություր Փաշազադեի համոզման՝ Բաքվում նման մաշտաբային միջոցառման անցկացումը մեկ անգամ եւս խոսում է իսլամական աշխարհում Ադրբեյջանի բարձր հեղինակության եւ վստահության մասին:

Նշենք, որ իսլամական հուշարձանների ոչնչացման մասին Ադրբեյջանի տարածած տեղեկությունները չեն արտացոլում իրականությունը, քանի որ թե՛ Արցախում, թե՛ հարակից տարածքներում իսլամական պատմամշակութային արժեքները հիմնականում պահպանված են: Դրանք հուշարձանագետ Ս.Կարապետյանի կարծիքով՝ մեծ մասամբ թուրքմենական եւ պարսկական ծագում ունեն, եւ միայն շատ քիչ թվով՝ ադրբեյջանական, իսկ վերջիններս վերագրվում են 19-րդ դարի երկրորդ կեսին եւ 20-րդ

դարին: Մինչդեռ աղբբեջանցիները խլամական մշակույթի բոլոր շերտերը փորձում են վերագրել Աղբբեջանին: Ներկայումս կանգուն են Շուշիի մզկիթները, Աղդամի մզկիթն ու դամբարանները, Խոջալուի գերեզմանները, Ֆիզուլիի մզկիթը, գյուղերում պահպանված են բոլոր հուշարձաններն այնպես, ինչպես խորհրդային ժամանակներում: Դուշարձանագետի կարծքիով՝ Արցախում եւ հարակից տարածքներում գտնվող խլամական հուշարձանները նաև հայկական մշակույթի հարստություններ են, քանի որ ստեղծվել են իհմնականում հայ շինարարների կողմից՝ հայկական ճարտարապետության փորձի հիման վրա:

Ի դեպ, հայկական կողմը ոչ միայն չի ոչնչացրել (ինչպես պնդում է Աղբբեջանը), այլև ջանքեր է գործադրում խլամական հուշարձանները վերականգնելու ուղղությամբ: 2005-ին Շայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը պատրաստականություն հայտնեց իր հովանու տակ վերցմել Շուշիի պարսկական մզկիթը եւ դրա վերականգնման համար մասնագետներ հրավիրել հրանից: Կովկասի մահմեդականների վարչությունն անմիջապես բացասականորեն արձագանքեց մզկիթի վերականգնմանը, ինչը, ըստ նրանց, կարող է կոնկրետ «Աղբբեջանի տարածքում» հայերի գործած «քռնարարքները», իսկ հրանցի մասնագետներին աղբբեջանցի հոգեւորականները կոչ արեցին հրաժարվել մզկիթի վերականգնման աշխատանքներին մասնակցելուց: Ներկայումս Արցախի թեմն ապահովում է մզկիթին հարող տարածքի մաքրությունը: Իսկ Շուշի քաղաքում գտնվող մեկ այլ մզկիթ «Շեն» իհմնադրամի ջանքերով արդեն նորոգված է:

Հատկանշական է, որ Շուշիում գտնվող խլամական հուշարձանների ներկա բարվոք վիճակի ականատեսն են եղել հենց իրենք՝ աղբբեջանցիները, երբ 2009թ. հուլիսին հայ-աղբբեջանական «Ժողովրդական դիվանագիտության» շրջանակներում աղբբեջանցի քաղաքական եւ մշակութային մի շարք գործիչներ, այդ թվում՝ Ռուսաստանում Աղբբեջանի դեսպան Փ.Բյուլբյուլօղլին, այցելեցին Արցախ, իսկ հայ գործիչներն էլ եղան Աղբբեջանում: Վերջիններս նկատել էին, որ չնայած հակառակ պնդումներին, Բաքվի հայկական Եկեղեցին եղել է առանց խաչի, չնորոգված, բացակայել են բակում երբեւէ եղած խաչքարերը, հայկական արձանագրությունները պատերից ջնջված են եղել, իսկ ներսում ոչ թե գրադարան է եղել, այլ գործերի պահեստ:

Այսպիսով, Աղբբեջանը որեւէ խլամական ատյան բաց չի թողնում իր նոր՝ խլամական իմիջը եւ դրան առնչվող խնդիրները ներկայացնելու համար: Մասնավորապես՝ Խլամական կոնֆերանս կազմակերպությունում Աղբբեջանի հաջողության պատճառն այն է, որ այդ ֆորումում փաստաթղթերն ընդունվում են կոնսենսուսով: Այդտեղ չի գործում քվեարկության

ընթացակարգ, բանաձեւն առաջարկվում է, եւ եթե ոչ մի անդամ պետություն վետո չի դնում, այն ընդունվում է: Բնականաբար, որեւէ պետություն իսլամական նշանակություն չի խախտի դրա հիմնարար սկզբունքներից մեկը՝ իսլամական համերաշխության գաղափարը եւ չի վնասի իր հեղինակությանը, ինչն էլ հնարավորություն է տալիս Աղրբեջանին՝ առանց ընդդիմախոսի անցկացնել իր համար շահեկան բանաձեւերը:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության համատեքստում Աղրբեջանի կողմից Հայաստանի դեմ ծավալվող քարոզչության մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաեւ մեկ այլ օրինակի: ԻԿԿ մշակույթի նախարարների Բարվի հանդիպումից մի քանի շաբաթ անց՝ նոյեմբերի 2-4-ը, կրկին Աղրբեջանի մայրաքաղաքում տեղի ունեցավ ԻԿԿ երիտասարդական ֆորումի եւ Աղրբեջանի կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության համատեղ ջանքերով կազմակերպված միջազգային մեկ այլ կոնֆերանս՝ «Թվային տեխնոլոգիաների դարաշրջանը եւ նոր սերունդը. երիտասարդության հնարավորությունների ընդլայնումը ինֆորմացիոն հաղորդակցական կապերում» խորագրով: Հատկանշական է, որ ԻԿԿ հիշյալ կառույցի աշխատանքները համակարգում է հենց Աղրբեջանը: Կոնֆերանսում հնչած առանձին ելույթներում անհրաժեշտ համարվեց արդի տեխնոլոգիաների զարգացումը նաեւ Աղրբեջանի դեմ Հայաստանի «ագրեսիան» միջազգային հանրությանն առավել լավ ներկայացնելու համար:

Իսլամական կառույցներում Հայաստանի դեմ Աղրբեջանի քարոզության մեկ այլ օրինակ է նոյեմբերի 10-ին Ստամբուլում կայացած ԻԿԿ տնտեսական եւ առեւտրական համագործակցության հանձնաժողովի 25-րդ նստաշրջանում Աղրբեջանի ներկայացուցչի ելույթը «գրավյալ տարածքների» մասին:

Այլեւս պարզ է, որ Աղրբեջանն իր ազգային անվտանգությունը փորձում է ապահովել նաեւ ապատեղեկատվության միջոցով, որը լայնորեն օգտագործվում է միջազգային, այդ թվում՝ իսլամական համատեքստում: Այս պարագայում Հայաստանը պետք է փորձի համարժեքորեն արձագանքել առկա մարտահրավերներին, ինչպես նաեւ միջազգային հնչեղություն տալ Աղրբեջանի կողմից հայկական մշակութային արժեքների ոչնչացման բազմաթիվ փաստերին, որոնցից են, օրինակ, Նոր Զուղայում շուրջ 218 եկեղեցիների եւ 2005թ. դեկտեմբերին աղրբեջանական բանակի կողմից հայկական խաչքարերի ոչնչացումը:

## «ԳՈՐԾ» ՊԱՏԵՐԱԶՄ Գագիկ Տեր-Չարությունյան

Աշխարհում կան երկրներ եւ տարածաշրջաններ, որտեղ ընթացող զարգացումները, որոշակի նկատառումներով եւ պատճառներով, գլոբալ տեղեկատվական դաշտում լիարժեք չեն լուսաբանվում: Վերլուծաբանական հանրությունում այդօրինակ տարածքներն ընդունված է անվանել «գորշ»: ԽՍՀՄ քաղաքացիների համար երկար ժամանակ դասական «գորշ» երկիր էր, օրինակ, Աֆղանստանը: Այդ երկրում «ինտերնացիոնալ օգնության» եւ «սոցիալիզմի հաստատման» կարգախոսների ներքո խորհրդային բանակի վարած ու մոտ 10 տարի տեւած (1979–1989թ.) պատերազմի մասին (որի ընթացքում զոհվեց մոտ 15 հազար զինծառայող, իսկ աֆղանների կորուստները՝ ներառյալ խաղաղ բնակչությունը, կազմեցին նվազագույնը մի քանի հարյուր հազար) ԽՍՀՄ քաղաքացիները երկար ժամանակ գրեթե տեղեկացված չէին: Այն տարիներին դա վերագրում էին «սովետական փակ ռեժիմի» առանձնահատկություններին: Աֆղանական պատերազմի տեղեկատվական շրջափակումը վերացվեց միայն 1988–1989թ., գորբաշովյան «պերեստրոյկայի» ժամանակ, որին եւ հետեւեց խորհրդային զորքերի դուրսբերումն այդ երկրից:

**Քսան տարի անց.** Անցել է մոտ 20 տարի, եւ նույն Աֆղանստանում արդեն ութ տարի է, ինչ ընթանում է հերթական հականարտությունը: Այս անգամ ԽՍՀՄ դերը ստանձնել են ԱՄՆ-ը եւ նրա ՆԱՏՕ-ի դաշնակիցները: Փոքր-ինչ փոխվել են նաեւ կարգախոսները. պատերազմն այժմ ընթանում է «ահաբեկչության դեմ պայքարի» եւ «ժողովրդավարության հաստատման» համատեքստում: Անշուշտ, միջազգային հանրությունը ներկայումս ավելի է իրազեկված Աֆղանստանում ընթացող զարգացումների մասին, քան նախկինում խորհրդային քաղաքացիները: Սակայն մինչեւ վերջերս լրատվական հոսքերի դիտարկումը ցույց էր տալիս, որ նոր աֆղանական պատերազմը, այնուամենայնիվ, անհամենատ ավելի սակավ է լուսաբանվում ԶԼՄ-ում, քան, օրինակ, մերձավորաբեւյան տարածաշրջանի գործընթացները: Այսինքն՝ տարածաշրջանը եւ դրա հետ միասին ընթացող հականարտությունը վերստին ձեռք էին բերել «գորշ» կարգավիճակ: Տեղեկատվական (եւ ոչ միայն) առումով ստեղծված իրավիճակն ինչ-որ չափով կարելի էր նմանեցնել խորհրդային տարիների «լրատվական

սովին», չնայած ԱՄՆ-ին եւ նրա դաշնակիցներին, թերեւս, դժվար է տոտալիտար, «փակ» երկրներ անվանել:

Միեւնույն ժամանակ, 2009-ից սկսած՝ տեղեկատվական դաշտում անդրադարձն Աֆղանստանի խնդիրներին անհամեմատ աճեց, եւ դա հիշեցնում է «պերեստրոյկայի» ժամանակահատվածը: Այս առումով նկատենք, որ այսօր ԱՄՆ-ում նույնպես ընթանում է յուրօրինակ «պերեստրոյկա»: Ուշագրավ է նաեւ, որ 1988–1989թթ. իրավիճակը Աֆղանստանում գրեթե դուրս էր եկել խորհրդային զորքերի վերահսկումից, ինչը նույնպես բավական մոտ է ներկայում ծեւավորված իրադրությանը:

Դա պայմանավորված է նրանով, որ ամերիկացիների եւ նրանց դաշնակիցների դեմ գործում են ոչ միայն Թալիբանի եւ Ալ-Քահդայի զինյալները. ռազմական գործողություններին ներգրավվում են նորանոր եթիկական խմբեր եւ տարաբնույթ միավորումներ, որոնք զգալիորեն ակտիվացրել են իրենց գործողությունները: Լայնացել է նաեւ այդ գործողությունների աշխարհագրությունը. այսօր մարտերն ընթանում են ոչ միայն Աֆղանստանում, այլև Պակիստանում:

Փոխվել է նաեւ զինյալների մարտավարությունը. հատկապես հրթիռների օգտագործումը եւ մահապարտների միջոցով ահաբեկչությունների իրագործումը (որանք չկային խորհրդային օկուպացիայի տարիներին) նոր եւ բարդ իրավիճակ են ստեղծել: Ռազմական գործողություններն այսօր «տեղափոխվել» են նախկինում համեմատաբար հանգիստ խոշոր քաղաքները (բավական է հիշել վերջերս Քարուլում ՄԱԿ նստավայրի վրա կատարված հարձակումը եւ Փեշավարի հրթիռակոծումը): Նման մարտավարության դեմ արեւմտյան զինուժը, ինչպես ցույց է տալիս նաեւ Իրաքի նախադեպը, արդյունավետ հակամիջոցներ դեռեւս չի մշակել:

Արդյունքում՝ ԱՄՆ եւ ՆԱՏՕ զինծառայողների կորուստները զգալիորեն աճում են, եւ միայն այս տարվա հոկտեմբերին ամերիկյան բանակը կորցրել է մոտ 60 մարդ: Չնայած Միացյալ Նահանգները 2009-ին լրացուցիչ 17 հազար զինծառայող է ուղարկել Աֆղանստան եւ ընթացող պատերազմի հիմնավորումով \$30 մլրդ-ով ավելացրել է 2010թ. ռազմական բյուջեն, մնացած դաշնակիցների շրջանում նկատվում են բարոյալքնան միտումներ: Որոշ երկրներ (օրինակ՝ Խուահան) մտադիր են այդ երկրից դուրս բերել իրենց զորամիավորումները<sup>1</sup>, այլ երկրներում (օրինակ՝ Գերմանիայում) աճում է հասարակական բողոքը վարվող պատերազմի դեմ: Ընդհանրապես պետք է արձանագրել, որ այդ պատերազմի նկատմամբ բացասական վերաբերմունքը միջազգային հանրությունում աճում է. արեւմտյան ԶԼՄ-ում կարելի է հանդիպել բազմաթիվ նյութերի, որոնցում

գուգահեռներ են տարվում Աֆղանական եւ Վիետնամական պատերազմների միջև: Վերջինում, ինչպես հայտնի է, ԱՄՆ-ը պարտություն կրեց, որն ամերիկյան մեկնաբանները հաճախ որակում են որպես «ամոթալի»:

Ինչպես հայտնի է, նման պարագաներում լուծումները փորձում են գտնել քաղաքական հարթությունում:

**Որոշակի անորոշություն.** Այս տարվա մարտին նախագահ Օբաման հրապարակեց Աֆղանստանում եւ Պակիստանում ամերիկյան գործողությունների AfPak (Afghanistan եւ Pakistan բառերից) անվանումն ստացած ծրագիրը: Համաձայն փաստաթղթի, Հարավային Ասիայում Սիացյալ Նահանգների հիմնական նպատակներն են զինված ահաբեկչական խմբավորումների վերացումը եւ արդյունավետ անվտանգության համակարգի ծեւավորումը: Վերլուծաբանական համրությունում, ինչպես նաև ամերիկյան բարձրաստիճան սպայակազմի որոշ շրջանակներում, գեկույցը մեկնաբանվեց հիմնականում այն ոգով, թե ԱՄՆ նոր վարչակազմը, այլ ոլորտներում վերախմբագրելով Զ.Բուշի գլորալ ռազմավարությունը, Աֆղանստանի խնդրում առաջմն սկզբունքորեն չի փոխում դիրքորոշումը: Մասնավորապես, համաձայն Միջազգային հարաբերությունների խորհրդի (Council on Foreign Relations, CFR) փորձագետ Դեմիել Սարկի, Վաշինգտոնի քաղաքականությունը վերոնշյալ երկրների հանդեպ շարունակում է մնալ անորոշ: Ըստ փորձագետի, նոր վարչակազմի ծրագրում հստակեցված չեն ռազմական, հետախուզական եւ դիվանագիտական ռեսուրսների մակարդակն ու դրանց բաշխումը: Խիստ կարեւորվում է նաև այն հանգամանքը, որ անորոշ են մնացել նաև AfPak-ի իրագործման ժամկետները: CFR-ի փորձագետի կարծիքով՝ Սիացյալ Նահանգները պետք է փոխի գերակայությունները տարածաշրջանում՝ ռազմաքաղաքական օգնության եւ ֆինանսական հատկացումների հիմնական մասն ուղղելով ոչ թե Աֆղանստան, այլ Պակիստան, որի կայունության (հատկապես միջուկային գենքի ոլորտում) պահպանումն առավել կարեւոր է: Դ.Մարկը նշում է նաև, որ նյութական ռեսուրսների ներկա սղության պայմաններում, Պակիստանի հետ ավելի սերտ համագործակցությունը ռազմաքաղաքական ոլորտում պակաս ծախսատար է, քան պատերազմ վարելն Աֆղանստանում: Համարվում է, որ բոլոր պարագաներում էլ շեշտադրումները երկու երկրներում պետք են դնել զինուժի եւ հատուկ ծառայությունների գործողությունների, այլ ոչ թե «պետական շինարարության» եւ «սոցիալ-տնտեսական զարգացման» խնդիրների վրա:

Հատկանշական է նաև, որ ըստ CFR-ի փորձագետի, ամերիկյան ներկայությունը Աֆղանստանում ոչ միայն չի նպաստում իրավիճակի

բարելավմանը, այլեւ միջազգային հանրությունում տպավորություն է ստեղծում, թե «ԱՄՆ-ը այդ երկրում մնալու գաղտնի պատճառներ ունի»: Նկատենք, որ վերջին հարցադրումը, իրոք, ակտուալ է, եւ պետք է ընդունել, որ ներկայիս բանավեճերն AfPak-ի շուրջ չեն շոշափում պատերազմի իրական նպատակները:

**Ուզմավարական նպատակները.** Գաղտնիք չէ, որ «ահաբեկչության դեմ պայքարը» եւ «ժողովրդավարության հաստատումը» Աֆղանստանում կամ Պակիստանում սուկ PR-ային կարգախոսներ են: Եվ դա, անշուշտ, առաջին հերթին հայտնի է ամերիկյան արտաքին քաղաքականության ոլորտի «ուղեղային կենտրոնի»՝ CFR-ի փորձագետներին: Պատերազմը Հարավային Ասիայում վարվում է բացառապես ռազմավարական-աշխարհաքաղաքական հարթությունում, եւ CFR-ը, խորհուրդ տալով Օբամայի վարչակազմին «թեթեւ» նայել «պետական շինարարության» եւ «սոցիալ-տնտեսական զարգացման» խնդիրներին, փաստորեն կոչ է անում չնոռանալ այդ պատերազմի իրական նպատակները: Տարածաշրջանի աշխարհագրությունը գրեթե իդեալական է ԱՄՆ հիմնական մրցակիցների՝ Զինաստանի եւ Ռուսաստանի (իսկ որոշ պարագաներում՝ նաև Իրանի) դեմ գործողություններ ծավալելու տեսանկյունից: Աֆղանստանում արդեն իսկ ստեղծվել է 12 ռազմակայանից բաղկացած ամերիկյան զինուժի զարգացած ենթակառուցվածք՝ իր օդանավակայաններով եւ այլ կառույցներով: Սակայն խնդիրը միայն այն չէ, որ պատերազմական իրադրությունում ախոյաններին արդյունավետ օդային եւ հրթիռային հարվածներ հասցնելու հնարավորություն լինի:

Գերակայությունն այդ տարածաշրջանում թույլ է տալիս անմիջականորեն ազդել նախկին խորհրդային միջնասիական հանրապետությունների վրա: Արմատական իսլամական գաղափարախոսության տարածումը եւ ահաբեկչական խմբավորումների ձեւավորումն այդ հանրապետություններում նպաստում են «գումավոր հեղափոխությունների» ու այլ գործողությունների միջոցով Ռուսաստանի հարավային սահմաններում «անկայունության գոտի» ձեւավորելուն:

Նույնատիպ նկատառումներ կան նաեւ Զինաստանի հանդեպ: Համաձայն բազմաթիվ աղբյուրների, դեռ մինչեւ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը ԿՐՎ-ն ձգտում էր ուղղողութել իսլամական ծայրահեղականներին ավելի ակտիվորեն աջակցելու ուղղութական անջատողականությանը, եւ վերջին անկարգությունները Սինցյանի ինքնավար շրջանում վկայում են, որ այդ ուղղությամբ որոշակի «առաջընթաց է նկատվում:

Խիստ կարեւոր է նաեւ աշխարհատնտեսական-էներգետիկ գործոնը:

Աֆղանստանով պետք է անցնի Կասպիջ-Յնդկական օվկիանոս նախատեսվող նավամուղը, իսկ Թուրքմենստանից Յնդկաստան տանող գազամուղը (որով շահագրգուված են ամերիկյան Unocal, Enron եւ Halliburton ընկերությունները), բայց դեռ չհաստատված վերջնական նախագծի, նույնպես անցնելու է Աֆղանստանով եւ Պակիստանով:

Սակայն, համաձայն որոշ փորձագետների, ԱՄՆ ծրագրերը չեն սահմանափակվում միայն աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական նկատառումներով:

**Գլոբալ օպիումային պատերազմ.** Համաձայն գերմանացի քաղաքագետ Վիլյամ Էնդհալի վարկածի, ԱՄՆ գինուժը գտնվում է Աֆղանստանուն նաեւ նրա համար, որ վերահսկի աշխարհի ամենախոշոր՝ օպիումի աճեցման ու առաքման աֆղանական շուկան եւ օգտագործի թմրանյութերը հատկապես Ռուսաստանի դեմ, իսկ ստացված գերշահույթներն ուղղի ճգնաժամից տուժած ամերիկյան ֆինանսական համակարգի վերականգնմանը:

Նման վարկածը կարող է եւ լուրջ չթվալ, սակայն փաստերը խոսում են հօգուտ գերմանացի քաղաքագետի: Համաձայն տարբեր աղբյուրների (այդ թվում՝ ԱՄՆ նախագահի աշխատակազմի «Թմրանյութերի ոլորտում ազգային քաղաքականության» վարչության դեկավարի), վերջին 1-2 տարում Աֆղանստանը մատակարարում է համաշխարհային օպիատների սեւ շուկայի շուրջ 90%-ը: Ըստ ԱՄԿ թմրանյութերի եւ հանցագործությունների վարչության (UNODOC) 2009թ. հրապարակած տվյալների, Ռուսաստանը դարձել է հերոինի խոշորագույն շուկա՝ սպառելով այդ թմրանյութի տարեկան արտադրանքի 20%-ը: Համաձայն ԱՄԿ տվյալների, վերջին 10 տարում թմրանոլների թիվն այդ երկրում աճել է 10 անգամ եւ այժմ կազմում է 1,5 մլն: Ռուսաստանում տարեկան օգտագործում են 75-80 տ հերոին (այսինքն՝ ավելի շատ, քան Չինաստանը՝ 45 տ եւ ԱՄՆ-ն ու Կանադան միասին վերցրած՝ 20 տ), իսկ թմրանյութերի գնման համար ծախսվում է \$13 մլրդ:

Ո՞՛ Պետդումայի Միջազգային հարաբերությունների կոմիտեի անդամ Սեմյոն Բաղդասարովը, որը Կենտրոնական Ասիայի հանրահայտ գիտակներից է, նույնպես պնդում է, որ ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ն ոչ թե պայքարում, այլ փաստացի նպաստում են թմրանյութերի աճեցմանն Աֆղանստանում: Ս.Բաղդասարովը մասնավորապես նշում է, որ 2001թ. Թալիբանի վարչախմբի իշխանության օրոք այդ երկրում հավաքում էին ընդամենը 185 տ օպիում, իսկ ներկայում՝ 43 անգամ ավելի՝ 8 000 տ: Այս ամենին հավելենք, որ Վիլյամ Էնդհալի տվյալներով՝ թմրանյութերի աճեցման եւ

սպառման գլխավոր հովանավորն Աֆղանստանի ղեկավար Յամիդ Քարզայն է:

Յարկ է նշել, որ «օպիումային» գենքը հայտնի է դեռեւ 17-րդ դարից: Յոլանդացիներն այդ թմրանյութը վաճառում էին Ինդոնեզիային՝ համեմունքների դիմաց, նպատակ ունենալով այդպիսով նաեւ բարոյալքել ինդոնեզացիներին, որոնք դիմադրում էին հոլանդական պլանտացիաների տարածմանն իրենց երկրում: Յետազայում այդ տեխնոլոգիան մեծ հաջողությամբ կիրառեցին նաեւ բրիտանացիները Չինաստանի դեմ: Առաջին (1840–1842թթ.) եւ Երկրորդ (1856–1860թթ.) օպիումային պատերազմների ընթացքում, թեյի ներկրման առեւտրում արծաթը փոխարինելով օպիումով, նրանք կարողացան չինացիների գրեթե կեսին դարձնել թմրամոլ եւ այդպիսով փաստացի գրավել այդ երկիրը:

---

<sup>1</sup> Այդ համատեքստում բնութագրական է իտալական զորամիավորման հետ կապված միջադեպը: Բացահայտվել էր, որ այդ երկրի հատուկ ծառայությունները կաշառել էին աֆղան զինյալներին, որպեսզի վերջիններս ակտիվ ռազմական գործողություններ չվարեն իտալացիների դեմ:

## ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՇՈՒՐՋ ՔԵՆԻԱՄԻՆ Պողոսյան

2004թ. իրականացված ընդլայնման արդյունքում Եվրամիության կազմում Կիպրոսի եւ Մալթայի հետ միասին ընդգրկվեցին նաեւ նախկին սոցիալիստական համակարգի մաս կազմող Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրներ: Ակնհայտ էր, որ Եվրամիությունն աստիճանաբար միջազգային հարաբերությունների լուրջ գործոնի է վերածվում եւ ավելի ազդեցիկ դերակատարում է ստանձնելու աշխարհաքաղաքական տարրեր գործընթացներում: Միաժամանակ թե՛ քաղաքագետների ու վերլուծաբանների եւ թե՛ Եվրամիության բարձրաստիճան պաշտոնյանների համար հստակ էր մեկ բան. առանց լուրջ կառուցվածքային բարեփոխումների Եվրամիությունը չի կարող հավակնել իր առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարմանը: Նոր ձեւավորված հսկայի բարեփոխման նպատակ էր հետապնդում Եվրամիության սահմանադրության նախագիծը, որի հիմնական դրույթների շուրջ Եվրամիության անդամ բոլոր 25 պետությունների դեկավարները համաձայնության եկան 2004թ. հոկտեմբերին: Սակայն 2005թ. մայիսին Ֆրանսիայում, իսկ այնուհետեւ հունիսին Նիդեռլանդներում անցկացված հանրաքվեների արդյունքում նշված երկրները մերժեցին սահմանադրության առաջարկվող նախագիծը:

Ստեղծված փակուղու հաղթահարման ուղղությամբ Եվրամիությունը քայլեր սկսեց ձեռնարկել 2007թ. ամռանը: Եվրամիության սահմանադրության փոխարեն առաջ քաշվեց Եվրամիության ընդհանուր կառույցներին ավելի քիչ լիազորություններ տրամադրող պայմանագիր ստորագրելու գաղափարը: Պայմանագրի տեքստը Եվրամիության անդամ բոլոր 27 պետությունների դեկավարները ստորագրեցին 2007թ. դեկտեմբերի 13-ին Լիսաբոնում: Ի տարբերություն սահմանադրության, որի վավերացման համար Եվրամիության մի շարք երկրներ որոշել էին հանրաքվեներ անցկացնել, Լիսաբոնյան պայմանագրի վավերացման համար հանրաքվե անցկացվեց միայն Իռլանդիայում: 2008թ. հունիսի 12-ին անցկացված քվեարկության մասնակիցների մեծամասնությունը դեմ արտահայտվեց պայմանագրին, սակայն 2009թ. հոկտեմբերի 2-ի վերաքվեարկության արդյունքում Իռլանդիան եւս վավերացրեց Լիսաբոնյան պայմանագրիը: Պայմանագրի վավերացման խնդրում վերապահություններ ունեին նաեւ

Եեհաստանը եւ Չեխիան, սակայն Իռլանդիայում կայացած կրկնակի քվեարկությունից հետո նախ պաշտոնական Վարչավան, իսկ 2009թ. նոյեմբերի 3-ին՝ նաեւ պաշտոնական Պրահան վավերացրին պայմանագիրը՝ ճանապարհ բացելով դրա՝ ուժի մեջ մտնելու համար:

Լիսարոնյան պայմանագիրը փոփոխություններ է առաջարկում ինչպես Եվրամիության կողմից որոշումներ ընդունելու գործընթացում, այնպես էլ միության կառուցվածքում: Զգալի նորամուծություններ են նախատեսվում նաեւ արտաքին քաղաքականության բնագավառում: Ստեղծվում է Եվրամիության խորհրդի նախագահի պաշտոնը, որը փաստացի իրականացնելու է Եվրամիության նախագահի պարտականությունները եւ ընտրվելու է երկու տարի վեց ամիս ժամկետով: Եվրամիության արտաքին քաղաքականության կոորդինացումը հանձնարարություն է արտաքին քաղաքականության գլխավոր հանձնակատարին, որը փաստացի իրականացնելու է Եվրամիության արտաքին գործերի նախարարի գործառույթները: Այս փոփոխությունները հնարավորություն կտան հստակություն մտցնել Եվրամիության արտաքին քաղաքականության մշակման, իրականացման եւ կոորդինացման խնդիրներում: Պայմանագիրն զգալիորեն ընդլայնում է Եվրախորհրդարանի լիազորությունները: Այն Եվրամիության միակ մարմինն է, որը ձեւավորվում է բնակչության ուղղակի քվեարկության ճանապարհով: Այսուհետեւ Եվրախորհրդարանը վճռական ձայնի իրավունք է ստանում արդարադատության, գյուղատնտեսության, ոստիկանական հանձնակարգի, միջազգային պայմանագրերի վավերացման, ինչպես նաեւ մի շարք այլ ոլորտներին առնչվող խնդիրների կարգավորման գործընթացում: Առավել մեծ իրավունքներ են տրվում նաեւ Եվրամիության քաղաքացիներին: Պայմանագրի համաձայն, Եվրոպական հանձնաժողովը պարտավոր է որոշում ընդունել ցանկացած նախաձեռնության վերաբերյալ, որին աջակցություն կիայտնի առնվազն մեկ միլիոն քաղաքացի: Պայմանագիրը նաեւ սահմանում է յուրաքանչյուր երկրի Եվրամիության կազմից դուրս գալու իրավունքը, չնայած այդ գործընթացի մանրամասները չեն ներկայացվում:

Կարեւոր փոփոխություններ են իրականացվել նաեւ Եվրոպական խորհրդի կողմից որոշումների կայացման մեխանիզմներում, չնայած հարկ է նշել, որ դրանք կսկսեն կիրառվել սկսած 2014թ.: Այս ոլորտում պայմանագիրը նախատեսում է «կրկնակի մեծամասնության» սկզբունքը: Որոշումների ընդունման համար դրանց օգտին պետք է քվեարկի Եվրամիության անդամ երկրների առնվազն 55 տոկոսը, որոնք ներկայացնելու են Եվրամիության բնակչության ընդհանուր թվի 65 տոկոսը: Որոշումների կայացման այս մեխանիզմը հնարավորություն է տալիս առավել արդյու-

նավետ կառավարել 27 պետություն ընդգրկող Եվրամիությունը՝ հնարավորինս խուսափելով փակուղային իրավիճակներից, երբ նույնիսկ մեկ երկրի բացասական դիրքորոշումը կարող է խափանել իրատապ եւ կարեւոր քայլերի իրականացումը:

Լիսաբոնյան պայմանագրի վավերացումը հնարավորություն է տալիս Եվրամիությանն ավելի ակտիվորեն ներգրավվել կտրուկ փոփոխվող աշխարհաքաղաքական գործընթացներում: Միջազգային հարաբերություններն այժմ ապրում են զարգացման մի յուրահատուկ ժամանակաշրջան: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին հաջորդող շրջանում միջազգային հարաբերությունները ծեւավորվում էին երկրեւեռ աշխարհի տրամաբանության շրջանակներում, որտեղ բեւեռներից մեկի առաջնորդը Ամերիկայի Միացյալ Նահանգներն էր, մյուսինը՝ Խորհրդային Միությունը: Սոցիալիստական համակարգի եւ ԽՄՀՄ փլուզումը 1990-ական թվականների սկզբին համապատասխան պայմաններ ծեւավորեց համաշխարհային մակարդակում ԱՄՆ գերիշխանության հաստատման համար: Աշխարհի միակ գերտերության կարգավիճակն ստանձնած պաշտոնական Վաշինգտոնը շուրջ 15 տարի գործում էր գրեթե անմրցակից աշխարհում՝ իր կամքը թելադրելով միջազգային համակարգի այլ ներկայացուցիչներին: Սակայն այդ իրավիճակն աստիճանաբար սկսել է փոխվել, եւ ներկայումս մենք ականատես ենք մի գործընթացի, որը պատկերավոր կարելի է անվանել որպես «Մյուսների վերելք»: Ռազմական առումով Միացյալ Նահանգները պահպանում է գերիշխանությունը, սակայն այլ ոլորտներում՝ տնտեսություն, մշակույթ, սոցիալական հարաբերություններ, ուժի կենտրոնն աստիճանաբար հեռանում է ԱՄՆ-ից: Չեւավորվում են ազդեցության նոր բեւեռներ՝ Չինաստան, Չնդկաստան, Ռուսաստան, Բրազիլիա, որոնք աստիճանաբար ավելի ու ավելի հստակ են արտահայտվում միաբեւեռ աշխարհի ներկայիս համակարգը փոփոխելու անհրաժեշտության մասին: Այս գործընթացն իր արտացոլումն է գտնում նաեւ միջազգային ազդեցիկ կազմակերպություններում: Պատահական չէ, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հաղթահարմանն ուղղված գագաթաժողովներն անցկացվում են ոչ թե «Մեծ յոթնյակի» կամ «ութնյակի», այլ «Մեծ քսանյակի» ծեւաչափով: Աստիճանաբար հզորացող պետությունները նոր լիազորություններ են պահանջում միջազգային տնտեսական այնպիսի կազմակերպություններում, ինչպիսիք են Չամաշխարհային բանկը եւ Արժույթի միջազգային իիմնադրամը:

Ահա այսպիսի պայմաններում Լիսաբոնյան պայմանագրի վավերացման գործընթացի ավարտը հնարավորություն է տալիս Եվրամիությանն ակտիվորեն ներգրավվել ընթացող աշխարհաքաղաքական գործընթաց-

ներում եւ դաշնալ ձեւավորվող բազմաբեւեռ աշխարհի կարեւոր կենտրոններից մեկը: Շուրջ 490 միլիոն բնակչություն, ավելի քան 4 միլիոն 300 հազար բառակուսի կիլոմետր տարածք եւ 14 տրիլիոն ԱՄՆ դոլար Հանախառն ներքին արդյունք ունեցող Եվրամիությունը լուրջ հավակնություններ կարող է ներկայացնել նոր ձեւավորվող միջազգային համակարգում բավականաչափ ազդեցիկ դիրք գրավելու համար: Եվրամիության բոլոր 27 պետությունների ընդհանուր ՀՆԱ-ն մոտավորապես հավասար է ԱՄՆ ՀՆԱ-ին, իսկ բնակչությունն ԱՄՆ-ին գերազանցում է շուրջ երկու հարյուր միլիոնով: Միաժամանակ, ի տարբերություն նոր ձեւավորվող աշխարհաքաղաքական այլ կենտրոնների, Եվրամիությունը հիմնականում զերծ է կրոնական եւ միջերմիկական խոր հակասություններից, այստեղ բնակչության մեծամասնությունն ընդհանուր արժեհամակարգի կրող է: Այս բոլոր գործոններն էլ ավելի են մեծացնում գլոբալ մասշտաբով առաջատար դիրքեր գրավելու Եվրամիության հնարավորությունները:

Սակայն Եվրամիության առջև կանգնած են նաեւ մի շարք խնդիրներ, որոնց կարգավորումը միայն հնարավորություն կտա վերջինիս միջազգային հարաբերություններում իրավես կարեւոր դերակատարում ստանձնել: Չնայած Լիսաբոնյան պայմանագրի վավերացմանը, դեռեւս առկա է բաժանումը այսպես կոչված հին եւ նոր Եվրոպաների միջեւ՝ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների առնչությամբ: 2004թ. հետո Եվրամիությանն անդամակցած կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի պետություններն ու մերձբալթյան երկրները շատ ավելի սերտ հարաբերություններ ունեն ԱՄՆ-ի հետ, ինչը հատկապես արտահայտվեց Իրաք ամերիկյան ներխուժման ընթացում: Պատռահական չէ, որ «Հին Եվրոպա» տերմինը շրջանառության մեջ մտցրեց ԱՄՆ պաշտպանության նախկին նախարար Դինալիդ Ռամսֆելդը՝ առաջին հերթին Գերմանիային, Ֆրանսիային, իսկ 2004թ. մարտից հետո՝ նաեւ Իսպանիային մեղադրելով հակամերիկանիզմի եւ արագ փոփոխվող շրջապատում դանդաղելություն ցուցաբերելու մեջ:

Եվրամիության ներսում լուրջ տարածայնություններ են առկա նաեւ Ռուսաստանի հետ հարաբերությունների ապագայի խնդրում: Այստեղ եւս Եվրամիության հին եւ նոր անդամների դիրքորոշումները բավականաչափ տարբեր են, ինչը հատկապես վառ դրսեւորումներ ունեցավ 2008թ. ռուս-վրացական պատերազմի ընթացքում: Եթե Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին ժամանեց Մոսկվա՝ Դմիտրի Մեդվեդեվի հետ հնարավոր գինադադարի պայմանները քննարկելու համար, ապա Լեհաստանի նախագահ Լեխ Կաչինսկին նույն օրը մեկնեց Թբիլիսի՝ աջակցություն հայտնելով Միխեիլ Սահակաշվիլուն եւ լրջորեն քննադատելով Ռուսաստանին:

Եվրամիության անդամ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի պետությունները մերձբալթյան համրապետությունների հետ միասին ռուսվրացական պատերազմից հետո Եվրամիությունից պահանջում էին պատժամիջոցներ կիրառել Ռուսաստանի նկատմամբ: Ռուսաստանի համեմեպ կոշտ դիրքորոշման վերջին վկայությունը նոյեմբերի սկզբին Լեհաստանի արտգործնախարար Ռադեկ Սիկորսկու Վաշինգտոնի Ռազմավարական եւ միջազգային հարաբերությունների կենտրոնում ունեցած ելույթն էր, որտեղ վերջինս հայտարարեց Ռուսաստանի հնարավոր ազգեսիայից պաշտպանվելու համար Լեհաստանի տարածքում ամերիկյան զորքերի տեղակայման անհրաժեշտության մասին՝ շեշտելով, որ սառը պատերազմի տարիներին Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը ներխուժումից ապահովագրում էր ոչ թե ՆԱՏՕ-ին այդ երկրի անդամակցությունը, այլ երեք հարյուր հազար ամերիկյան զինվորների առկայության փաստը: Լեհաստանի արտգործնախարարը մտագրիություն էր հայտնել նաեւ վերջերս Բելառուսի տարածքում ռուս-բելառուսական համատեղ զորավարժությունների կապակցությամբ, որոնց ընթացքում, ինչպես նշել էր Սիկորսկին, փորձարկվել են Լեհաստան ներխուժման սցենարներ:

Իր հերթին պաշտոնական Մոսկվան բավականաչափ կոշտ արձագանքեց Սիկորսկու այս հայտարարություններին: Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության խոսնակը նշեց, որ Լեհաստանը դեռևս մտածում է սառը պատերազմի չափանիշներով, իսկ ռուս վերլուծաբանները շեշտում են, որ Լեհաստանի տարածքում ամերիկյան զորքերի տեղակայումը կխախտի ԱՄՆ-ի կողմից Ռուսաստանին տրված երաշխիքները, որոնց համաձայն՝ խոշորածավալ ամերիկյան ուժեր չպետք է տեղակայվեն նախկինում Վարշավայի պայմանագրին անդամակցող ՆԱՏՕ նոր անդամների տարածքում:

Ռուսաստանի համեմեպ դիրքորոշման, ինչպես նաեւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սերտացման խնդրում նշված պետությունների մոտեցումը գրեթե լիովին համընկնում է Մեծ Բրիտանիայի տեսակետներին: Հարկ է փաստել, որ Եվրամիության համար կարեւորություն ներկայացնող արտաքին քաղաքական շատ խնդիրներում պաշտոնական Լոնդոնի տեսակետները տարբերվում են Եվրամիության մյուս «ծանրքաշայինների»՝ Ֆրանսիայի եւ Գերմանիայի դիրքորոշումներից եւ շատ ավելի մոտ են ԱՄՆ մոտեցումներին: Մեծ Բրիտանիա-Ֆրանսիա-Գերմանիա տարածայնությունները շատ հաճախ լուրջ խոչընդոտ են արտաքին քաղաքական կարեւորագույն հարցերում Եվրամիության միասնական դիրքորոշման ծեւավորման ծանապարհին: Մեծ Բրիտանիան յուրահատուկ պատկերացումներ ունի նաեւ Եվրամիության դերի եւ

նշանակության վերաբերյալ՝ պնդելով, որ կազմակերպությունը հիմնականում պետք է սահմանափակվի տնտեսական ինտեգրման խնդիրներով՝ միջազգային ասպարեզում առաջին հերթին հանդես գալով որպես միասնական տնտեսական, այլ ոչ թե քաղաքական միավոր:

Այս խնդիրի յուրահատուկ լուծում կարող է դառնալ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլեերի ընտրությունը Եվրամիության խորհրդի նախագահի պաշտոնում: Բլեերը կարող է նպաստել Մեծ Բրիտանիայի եւ մայրամաքային Եվրոպայի պետությունների միջեւ առկա խնդիրների կարգավորմանը, ինչպես նաև դրական դերակատարություն ստանձնել ԱՄՆ-Եվրամիություն հարաբերություններում: Ներկայումս Բլեերն այդ պաշտոնի հիմնական թեկնածուն է, չնայած մի շարք Եվրոպական պետություններ գտնում են, որ վերջինիս կողմից Եվրամիության փաստացի նախագահի պաշտոնի ստանձնումը կարող է վտանգել արտաքին քաղաքական խնդիրներում Եվրամիության անկախությունը՝ ԱՄՆ-ի հետ Մեծ Բրիտանիայի չափազանց սերտ կապերի պատճառով:

Այնուամենայնիվ, չնայած առկա խնդիրներին, Լիսաբոնյան պայմանագրի վավերացումը էական քայլ է Եվրամիության՝ միջազգային ասպարեզում ազդեցիկ գործոնի վերածվելու ժամապարհին, որը երկարաժամկետ առումով զգալի հետեւանքներ կունենա աշխարհաքաղաքական գլոբալ գործընթացների վրա: Չնայած պաշտոնական Վաշինգտոնի հետ ունեցած որոշ տարածայնություններին, Եվրամիությունը ԱՄՆ-ի հետ միասին արեւմտյան քաղաքակրթության եւ արժեհամակարգի հիմնայուններից է, եւ նրա աստիճանական հզորացումը արգելակող դեր կարող է խաղալ համաշխարհային ուժային կենտրոնների՝ Արեւմուտքից դեպի Ասիա տեղափոխման գործընթացում:

## ԱՄՆ-ԻՄՐԱՅԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԼԵՎԵԶՆԵՐԸ

### ***Սուրեն Մանուկյան***

Նորեյան համձնաժողովը 2009թ. խաղաղության համար մրցանակը շնորհեց Բ.Օքամայիմ՝ հիմնավորելով դա այն առանձնահատուկ ջանքերով, որ ԱՄՆ նախագահը գործադրում է ժողովուրդների միջեւ համագործակցության բարելավման ուղղությամբ: Հատուկ նշվում են Սերծավոր Արեւելքում ԱՄՆ ձեռնարկած քայլերը: Իրականում, հրաժարվելով իր նախորդի վարած քաղաքականությունից, Օքաման որեւէ ձեռքբերում այս ուղղությամբ դեռ չի արձանագրել: Միակ բանը, որին նա հասավ այս փուլում, ամերիկա-խրայելական հարաբերություններում ժամանակավոր սառնությունն էր:

#### **Ամերիկյան արտաքին քաղաքականության «փոփոխություն»**

2009թ. հունվարից ստանձելով ԱՄՆ նախագահի պաշտոնը՝ Բ.Օքաման շտապեց իրականացնել ընտրությունների ժամանակ առաջ քաշած իր կարգախոսը՝ «Փոփոխություն»: Այն դրսեւորվեց արտաքին քաղաքական գոեթե բոլոր ուղղություններում, այդ թվում նաև մերծավորարեւելյան քաղաքականությունում: Մերծավոր Արեւելքում ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց նշանակված Զորջ Միթչելի առաջ խնդիր դրվեց ակտիվացնել ԱՄՆ քաղաքականությունը տարածաշրջանում: Իսկ 2009թ. հունվարի 27-ին արարական «ալ-Արաբիա» հեռուստաալեռվագությանը տված հարցազրույցում Բ.Օքաման փաստեց, որ հարկ է «հանդիպել բոլոր կողմերի հետ ու նախ եւ առաջ լսել բոլորին, քանի որ նախկինում Միացյալ Նահանգները սովորաբար ամեն ինչ սկսում էր պարտադրանքով»: Փոփոխության ձգումն ավելի դրսեւորվեց 2009թ. հունիսի 4-ին Կահիրեի համալսարանում ԱՄՆ նախագահի ելույթում: Հնչեցրած խոսքերն արդարացրին հսկայական հեռուստալսարանի սպասելիքները. «Ես եկել եմ Կահիրե Միացյալ Նահանգների եւ ամբողջ աշխարհի մուսուլմանների միջեւ նոր հարաբերությունների սկիզբ դնելու համար, որը հիմնված է լինելու շահերի եւ փոխադարձ վստահության վրա: Այն պետք է կառուցված լինի այն ճշմարտության վրա, որ Ամերիկան եւ իսլամը չեն դիմակայում միմյանց եւ մրցակցելու արիթ նույնագեն չունեն:

Կան շատ ընդհանուր գժեր եւ սկզբունքներ, որոնք միացնում են նրանց: Դրանք արդարության, առաջադիմության, համդուրժողականության եւ յուրաքանչյուր մարդկային էակի արժանապատվության ընդունման սկզբունքներն են»: Իհարկե, այս խոսքերն ասվել էին նաեւ նրա նախորդի՝ Բուշի օրոք, սակայն այս անգամ լսարանը ցանկանում էր հավատալ ԱՄՆ նոր նախագահի անկեղծությանը:

Եվ, իրոք, փոփոխություններն ԱՄՆ մերձավորարեւելյան քաղաքականության մեջ շուտով տեսանելի դարձան: Յայտարարվեց մինչեւ 2012թ. Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման պատրաստակամության մասին: ԱՄՆ նախագահ Բուշի հռչակած Զարի առանցքի մեջ ընդգրկված իրանի եւ Սիրիայի հետ հարաբերությունները որոշակիորեն փոխվեցին: Վաշինգտոնն ընդմիջումից հետո նոր դեսպան նշանակեց Դամասկոսում, ինչպես նաեւ Իրանի հետ ուղղակի երկխոսության պատրաստակամություն հայտնեց: Փոփոխություններ նախաձեռնվեցին նաեւ ԱՄՆ – Իսրայել հարաբերություններում:

ԱՄՆ նոր վարչակարգի մերձավորարեւելյան ռազմավարությունը, հիմնականում կրկնում է 2006թ. Դենկրատական կուսակցության նախընտրական Բեյքեր – Շամիլըն ծրագրի դրույթները: Այն նախատեսում էր Իսրայելի կողմից զգալի զիջումներ՝ որպես Սիրիայի եւ Իրանի հետ ԱՄՆ երկխոսության եւ տարածաշրջանում արեւմտանետ արարական ռեժիմների հեղինակության բարձրացման համար անհրաժեշտ պայման: Սա նաեւ թույլ էր տալու Օբամային ապահովագրել իր անենակարեւոր արտաքին քաղաքական խոստման՝ Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման ավելի արդյունավետ իրականացումը:

Իսրայելին առաջարկվում էր ընդունել Սաուդյան Արաբիայի առաջարկած խաղաղության նախաձեռնությունը՝ հետ քաշվել մինչեւ 1948–1949թթ. ծեւավորված կանաչ գիծը, համաձայնել Պաղեստինյան պետության ստեղծմանը Արեւմտյան ափի եւ Գազայի ամբողջ տարածքում, Երուսաղեմի բաժանմանը եւ պաղեստինյան փախստականների վերադարձին Իսրայելի ներքին շրջաններ: Միա դիմաց արարական վարչակարգերը պետք է համաձայնեն «Իսրայելի հետ հարաբերությունների նորմալացմանը» եւ ներգրավվեն Իրաքում իրավիճակի կարգավորման Սպիտակ տան ծրագրի մեջ:

Սակայն շուտով պարզ դարձավ, որ նախընտրական այս ծրագրերն այդքան էլ իրատեսական չեն իրական քաղաքականության մեջ: Իրանը եւ Սիրիան թեև իրենց գոհունակությունը հայտնեցին Օբամայի նոր քաղաքականության վերաբերյալ, սակայն այն օգտագործեցին ընդամենը սեփական դիվանագիտական դիրքերն ամրապնդելու համար՝ չիրաժա-

վելով սեփական ավանդական գործողություններից: Իրաքում իրավիճակը չի կայունանում, եւ կասկածներ են առաջանում ամերիկյան զորքերի դուրսբերումից հետո այնտեղ հնարավոր զարգացումների վերաբերյալ: Իսկ Խորայելը բնավ էլ չի պատրաստվում զիջել այն հարցերում, որոնք արդեն նոտ կես դար վեճերի առարկա են մնում:

### **Յի՞ն խնդիրներ եւ նոր ծնշումներ**

ԱՄՆ նախագահ Բ.Օբաման արաբ-խորայելական հակամարտության լուծնան եւ խաղաղության հաստատման բանալին համարեց Պաղեստինյան պետության ստեղծումը: Թեեւ սա նոր դրույթ չէ, եւ նույնիսկ հստակ նշված է 2003թ. մայիսի 7-ի ճանապարհային քարտեզում, սակայն Օբաման դրա իրականացմանն ավելի մեծ վճռականությամբ լծվեց:

Պաղեստինյան փախստականների «Վերադարձի իրավունք» տերմինն ամերիկյան քաղաքական բառապաշար մտավ դեռ Զ.Բուշի օրոք, որը, ենթարկվելով «Իրաքի հետազոտման խմբի» ղեկավարների (այդ թվում՝ ԱՄՆ նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերի) ճնշմանը, համոզեց ԱՄՆ կառավարությանն աջակցել բանակցություններում առանցքային խնդիրներից մեկին՝ պաղեստինցիների վերջնական կարգավիճակին: Զորջ Բուշը մի քանի անգամ հրապարակավ հայտարարեց պաղեստինցիների այդ իրավունքի մասին:

Հաջորդ հարցը, որն ակտիվորեն քննարկվում էր 2009թ. ամռանը, Յորդանան գետի Արեւմտյան ափի խորայելական բնակավայրերի խնդիրն էր: Այս հարցի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան նաեւ հենց Խորայելի ներսում, եւ Սպիտակ տանը կարծում էին, որ հնարավոր է առանց մեծ դժվարության համոզել Խորայելի կառավարությանը դադարեցնել շինարարությունը եւ ենթակառուցվածքների զարգացումը հրեական բնակավայրերում՝ կանաչ գոտուց դուրս: Օբամայի խորհրդականները համոզված էին, որ Խորայելի նոր վարչապետ Նեթանյահուն, ունենալով ավելի կարեւոր՝ Իրանի հարցում ԱՄՆ աջակցությունն ստանալու անհրաժեշտություն, չի համառելու նման՝ ավելի երկրորդական խնդրում: Նախագահը եւ պետքարտուղարը մի քանի անգամ հրապարակայնորեն հայտարարեցին, որ քննադատում են այդ քաղաքականությունը եւ կառուցապատումը համարում են անօրինական:

Ծնշումն Խորայելի վրա շարունակվեց նաեւ այլ ուղղություններով. Վաշինգտոնն առաջին անգամ բարձրացրեց խորայելական միջուկային գենքի թեման՝ կոչ անելով հայտարարագրել միջուկային զինանոցը եւ ոչնչացնել այն: ԱՄՆ նախագահը նաեւ հրաժարվեց Իրանի նկատմամբ

Իսրայելի կողմից ուժի հնարավոր կիրառումը միանշանակ պաշտպանելուց: Բարձրաձայնվեց նույնիսկ իսրայելին ֆինանսական օգնության կրծատման հնարավորության մասին:

### **Իսրայելական մերժումը եւ փոխզիջման սահմանները**

Իսրայելը, սակայն, այնքան ուժեղ գտնվեց, որ իրաժարվեց նման չափի զիջումների գնալ: Դա առավելապես երեւաց այն ժամանակ, երբ 2009թ. փետրվարին իշխանության եկավ աջ կառավարության դեկավար թենիամին Նեթանյահուն, որը վաղուց հայտնի է տարածաշրջանային կարգավորման Օսլոյի պարադիգմի նկատմամբ ունեցած բացասական դիրքորոշմամբ: Բացի այդ, նա ընտրություններից հետո կազմեց լայն կոալիցիոն կառավարություն, որը մեծ հեղինակություն է վայելում երկրում եւ այնքան ամուր է, որ ընդունակ է դիմակայել արտաքին ծնշումներին:

Սկզբուն Նեթանյահուն, որն իշխանության գալուց հետո խստացրեց իսրայելի դիրքորոշումը պարեստինյան հարցում, ստիպված էր որոշակի զիջումների գնալ: Նա նույնիսկ համաձայնեց Պաղեստինյան պետության ստեղծմանը, սակայն դրա դիմաց պահանջեց իսրայելի համար «հրեական ժողովրդի ազգային պետության կարգավիճակ»: Սա հակասության մեջ է մտնում պաղեստինյան քաղաքական վերնախավի մի մասի կարծիքի, օրինակ՝ ՀԱՍԱՍ-ի դիրքորոշման հետ, որոնք կարծում են, թե չի կարելի ազգային բնորոշումներ տալ ստեղծվելիք երկու պետություններին՝ մտադրություն ունենալով ապագայում ժողովրդագրական աճի միջոցով հետզհետև գերիշխանություն հաստատել նաեւ իսրայելում: Բացի այդ, Նեթանյահուն պնդում էր Պաղեստինի ապառազմականացումը՝ «ես մեկ Գազայի հատված եւ երկրորդ իրան սեփական սահմանների մոտ» չստանալու համար:

Սակայն, որոշ ժամանակ անց, Նեթանյահուն, որը միշտ աշխատել է չհակադրվել ամերիկացիներին, այս անգամ բավական կոշտ ծեւով մերժեց նրանց առաջարկները: Ամերիկյան պահանջները, իսրայելական ընկալմամբ, չափազանց մեծ էին, եւ սա ավելի ակնհայտ դարձավ, երբ ԱՄՆ պետքարտուղարությունը, ծզգրտելով սեփական դիրքորոշումը հրեական բնակավայրերի կառուցապատման վերաբերյալ, հայտարարեց, որ նկատի ունի նաեւ Արեւելյան Երուսաղեմի հրեական թաղամասերը: Նման բան ամերիկյան վարչակարգերը երբեք թույլ չէին տվել: Իսրայելը քանդեց 22 բնակավայր, սակայն մոտ ութ տասնյակ բնակավայր չցանկացավ վերացնել: Ըստ Նեթանյահուի՝ 300 հազար բնակիչներով այդ բնակավայրերը չեն կարող չընդլայնվել բնական աճի պատճառով: Երուսաղեմի

պարագայում հսրայելի վարչապետը բացառեց բաժանման ցանկացած տարրերակ՝ Երուսաղեմը հաճարելով հրեական ժողովրդի հավերժ մայրաքաղաք: Փախստականների վերադարձի վերաբերյալ հայտարարվեց, որ դա անհամատեղելի է հսրայելի՝ իբրեւ հրեական ժողովրդի ազգային օջախի, կարգավիճակի հետ: Այս դիրքորոշումը պաշտպանեցին հսրայելի գրեթե բոլոր քաղաքական ուժերը:

Բացի այդ, հսրայելին հաջողվեց բնակավայրերի թեման քաղաքական դաշտից տեղափոխել հումանիտար հարթություն՝ բարձրացնելով սեփական պատմական հայրենիքում հրեաների բնակվելու իրավունքի հարցը, անկախ նրանից, թե որտեղով են անցնելու հսրայելի եւ Պաղեստինյան պետության ապագա սահմանները:

Իսրայելի ննան միակարծությունը եւ համառությունը տվեց իր պտուղները: Օգոստոսի 27-ին հայտարարվեց, որ Յուրեայում եւ Սամարիայում շինարարության ժամանակավոր սառեցման դիմաց ԱՄՆ-ը հանում է Արեւելյան Երուսաղեմին վերաբերող նույնանձնան պահանջը: Սեպտեմբերի սկզբին պարզ դարձավ, որ Արեւելյան ափի հրեական բնակավայրերի շուրջ 2500 բնակարանային եւ հասարակական-կոմունալ օբյեկտների շինարարությունը շարունակվում է, իսկ պաշտպանության նախարար եհուդ Բարաքը հավանություն տվեց եւս 455 նոր միավորի շինարարությանը: Սեպտեմբերի 22-ին Նյու Յորքում Նեթանյահու – Օբամա հանդիպման արդյունքում բանակցությունների բառապաշտից դուրս եկավ «բնակավայրերում շինարարության սառեցում» տերմինը՝ տեղը գիշելով «վերաբնակեցման ակտիվության սահմանափակմանը»:

Մոտեցումների մեջմացումը ծայրահեղ բացասական արձագանք գտավ արաբական վարչակարգերի մոտ: Պաղեստինյան ազգային ինքնավարության նախագահ Մ.Աբասն Իսրայելի հետ բանակցությունների վերսկսումը կապեց Իսրայելի կողմից վերաբնակեցման քաղաքականության դադարեցման հետ: Սա նոր հնարավորություն տվեց իսրայելցիներին՝ համոզել ամերիկացիներին, որ Վաշինգտոնի կողմից հրեական բնակավայրերում շինարարությունը դադարեցնելու պահանջը գործընթացի առաջխաղացման միջոցից վերածվում է բանակցությունների գլխավոր խոչընդոտի:

### **Վերադարձ ավանդական քաղաքականությանը**

Հանդիպելով Իսրայելի ննան համառ դիմադրությանը՝ Օբաման ամենայն հավանականությամբ հասկացել է, որ իր նախորդների «փոքր գործերի» փուլային տարրերակով առաջ շարժվելու մարտավարությունն

արար-խրայելական հակամարտության պարագայում ավելի արդյունավետ է, քան կտրուկ որոշումները:

Այս պարագայում կամ պետք է ավելացնել ճնշումը Խսրայելի վրա՝ գնալով ամերիկա-խրայելական հարաբերությունների ավելի սրման, կամ զիջել Նեթանյահուին՝ սեփական հեղինակության հաշվին, բայց պահպանելով Խսրայելի հետ «հատուկ հարաբերությունները»: Կարելի է փաստել, որ երկրորդ տարբերակը հաղթել է, եւ ամերիկա-խրայելական հարաբերությունները, գոնե այս փուլում, վերադարձել են այն ավանդական կարգավիճակին, երբ Խսրայելի անվտանգության ապահովումը լինելու է ԱՄՆ արտաքին քաղաքականության անկյունաքարերից: Սա բնական է, հաշվի առնելով այն աջակցությունը, որ իրեա ընտրողները ցույց տվեցին Օբամային (78%) եւ այն ներգրավվածությունը, որ նրանք ունեն ԱՄՆ նախագահի վարչակարգում (Օբամայի աշխատակազմի ղեկավարը՝ Ռ.Էմանուելը, եւ գլխավոր քաղաքական խորհրդականը՝ Դ.Աքսելրոդը, իրեաներ են, որոնք սերտ կապեր ունեն համայնքի հետ):

ԱՄՆ-ը վերադարձավ իր ավանդական քաղաքականությանը: Դրա ամենավառ արտահայտությունը եղավ նոյեմբերի սկզբին ՍԱԿ նախաձեռնած, Գազայում 2009թ. սկզբին իրականացված խրայելական գործողությունները գնահատող Գոլդմաքի զեկույցի քննադատությունը ԱՄՆ Կոնգրեսի եւ վարչակարգի կողմից, որոնք Խսրայելին քննադատող փաստաթուղթը որակեցին «անաշառությունից զուրկ եւ խեղված»:

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆԻ ԴԵՐԸ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ Կարեն Վերանյան

### Յրեա գինվորականի վարքականոնը

Յրեության շրջանում գինվորականի կերպարը մշտապես ընկալվել է որպես հրեական պետականության շարունակականության, հրեա ժողովորդի ու նրա ժառանգության պաշտպանության առաջնակարգ երաշխիքներից մեկը: Յատկապես պետականության բացակայության ժամանակաշրջանում էապես կարեւորվել է հրեա գինվորականի բարոյահոգեւոր բարձր պատրաստվածության հարցը՝ որպես ազգային ինքնության պահպանման կարեւորագույն բաղադրիչ: Արդյունքում՝ հրեության պատմության հաղթանակներն ու հերոսապատումները դարձել են այն կարեւորագույն արժեհամակարգային սկզբունքները, որոնք եւ հետագայում հիմք հանդիսացան հրեա գինվորի վարքականոնի ստեղծման համար: Զինվորական վարքականոնի շուրջ ձեւավորված ավանդական մոտեցումներն իրենց կիրառական գործածությունը ստացան Առաջին աշխարհամարտի տարիներին, երբ դրվեցին հրեական պետականության վերստեղծման հիմքերը: Առանձնակի պետք է ներկայացնել Իոսիֆ Տրումանական կերպարը, որը զգալի ավանդ ունեցավ վարքականոնի նորմերի ձեւավորման գործում: Յրեության շրջանում հերոսացված Տրումանական կերպարը հատակ էր գիտակցում ժամանակաշրջանի միջազգային բարդ իրադրությունուն հրեական պետականության ստեղծման հարցում հրեա գինվորի՝ որպես խիզախ, բարոյահոգեւոր բարձր արժեքներ կրող մարտիկի, անզնահատելի կարեւորությունը: Տրումանական մեծ տեղ էր հատկացնում «ժողովրդի բանակի» գաղափարին, որի գինվորականները իրենց հետեւից կտանեին հրեա ժողովրդին, կպաշտպանեին վերջինիս ու իրենց պետականությունը՝ չինայելով սեփական կյանքը: Տրումանական կյանքը: Տրումանական կյանքը հիմքում տեսնում էր «ասպետական պատասխանատվության» բարոյական նորմը:

Յրեա գինվորականի վարքականոնի՝ տրումանական մոտեցումն աջակցություն ստացավ հրեական պետական հիմնադիր այրերի (առաջին հերթին՝ Երկրի առաջին վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնի) կողմից: Նրանց բարոյական պատկերացումները կենտրոնանում էին պետականակենտրոն գաղափարախոսության վրա, ըստ որի՝ հրեա գինվորի արժեքային համակարգի հիմքում դրվում էր հրեական պետության անվերապահ

ծառայելու ու հավատարիմ լինելու գգացումը՝ որպես «բարձրագույն առաքելություն»:

Յրեա զինվորի դերը կարեւորվեց եւ հետագա տասնամյակներում՝ պայմանավորված արաբ-խրայելական հաճախակի պատերազմներով, ինչը հետեւաբար նպաստեց վարքականոնի հայեցակարգի ի մի բերման գործընթացին: Հայեցակարգն ամփոփ բնույթ ստացավ 1992թ., երբ Խրայելի պաշտպանության ուժերը ներկայացրին «Խրայելի պաշտպանության ուժերի վարքականոնը»: Փաստաթուղթը ստացավ լայն միջազգային հնչեղություն: Վերջին շրջանում ԱՄՆ Պենտագոնը միջազգային ահարեւէչության դեմ պայքարում դիմել է զինվորի վարքականոնի՝ հրեական փորձի օգնությանը: Խրայել պետության կողմից վարքականոնին տրված բարձրագույն կարեւորության մասին է խոսում այն, որ վերջինս հանդիսանում է Խրայելի պաշտպանության ուժերի դոկտրինի երկու գլխավոր բաժիններից մեկը՝ «Եթիկա» խորագրով: Փաստաթորի համաձայն, «Խրայելի պաշտպանության ուժերի նպատակն է Խրայելի պետության ու նրա անկախության գոյության պաշտպանությունը, Խրայելուն բնականոն կյանքի խաթարմանն ուղղված բոլոր թշնամական ջանքերի չեղոքացումը: Խրայելի պաշտպանության զինվորները պարտավոր են մարտնչել, անվերապահորեն ներդնել իրենց ողջ ունակությունները եւ նույնիսկ զոհաբերել իրենց կյանքը հանուն Խրայելի պետության, նրա քաղաքացիների պաշտպանության»:

Վարքականոնում հաստատագրված արժեքներից հատկապես պետք է առանձնացնել հետեւյալները.

- ❖ առաքելության գիտակցում եւ նպատակային կամք՝ այդ առաքելության կատարման ու հաղթանակի հասնելու համար,
- ❖ պատասխանատվության գգացում՝ Խրայել պետության, նրա բնակիչների պաշտպանության գործում,
- ❖ անձնական օրինակի մատուցում (իրեա մարտիկը պետք է կատարի իր պարտականությունները այնպես, ինչպես ինքն է պահանջում գործընկերներից),
- ❖ մարտական գործողությունների ժամանակ իրեա զինվորականը պետք է վտանգի իր եւ իր գործընկերների կյանքը՝ միայն այն չափով, որչափով պահանջվում է դրված առաքելության կատարման համար,
- ❖ եղբայրություն կամ թիմային ոգի:

Խրայելի պաշտպանության ուժերի հայեցակարգի մյուս՝ «Հիմնական հայեցակարգ» մասնաբաժնում նույնպես առանձնահատուկ շեշտվում են իրեա զինվորականության բարոյահոգեբանական պատրաստվածության

հիմնահարցերը՝ որպես Խսրայելի պետության, նրա բնակիչների պաշտպանության հիմնարար երաշխիք: «Դիմնական հայեցակարգում» ներառված հիմնադրույթների շարքում տիպիկ օրինակ է առաջին կետը, ըստ որի՝ «Խսրայելը չի կարող պարտություն կրել անգամ մեկ պատերազմում»:

### **Յրեա ռազմագերիների խնդիրը**

Յրեության շրջանում յուրաքանչյուր իրեա զինվորի բարձր արժեւորման հանգամանքը հաստատվում է նաև իրեա ռազմագերիների ազատման հարցերի լուսաբանման առումով, ինչն առանցքային տեղ է զբաղեցնում հուղայականությունում: Յրեա ռազմագերիների ազատագրումն ասոցացվում է «Գեուլա» կամ «Ազատագրում» կոչվող բարեգործության ամենօրյա աղոթքի հետ, որում իրեաներն իրենց շնորհակալությունն են հայտնում Աստծուն՝ Մովսեսի առաջնորդությամբ Եգիպտոսից իրեաներին ստրկությունից ազատագրելու համար: Աստված իրեա ժողովրդին ներկայանում է ոչ թե երկնքի ու երկրի արարիչ, այլ որպես ազատագրիչ: Եգիպտոսից իրեաներին ստրկացումից ազատելու հիմնահարցը նշանակալի տեղ ունի նաև իրեության ազգային ինքնության համատեքստում: Այստեղից էլ իրեա ռազմագերիների խնդիրը կապվում է Եգիպտոսյան գերեվարումից իրեա ժողովրդի ազատագրման հետ: «Միշնե Թորա»-ի 7-րդ՝ «Աղքատներին բարեգործություն անելու մասին» օրենքում ասվում է. «Գերիների ազատագրումը նախորդում է աղքատների կերակրման ու հոգ տանելուն, եւ գոյություն չունի մեկ այլ առավել կարեւոր պատվիրան, քան գերիների ազատումը, քանզի գերին եւ քաղցած է, եւ պապակ, եւ մերկ, եւ իր կյանքը մշտապես վտանգի տակ է գտնվում: Նա, ով աչք է փակում գերիների ազատման վրա ու խուսափում դրանից, դրանով իսկ խախտում է Թորայի մեկնություններից ու գրություններից շատերը»:

Յրեական կրոնական ավանդույթում իրեա ռազմագերու՝ ամեն գնով ազատման սկզբունքը դարերի ընթացքում կրոնաիրավական այլ մեկնությունների անհրաժեշտություն առաջացրեց: Խնդիրն այն է, որ ցանկացած փրկագնուվ ազատման գործում իրեության պատրաստակամությունը բերեց թշնամիների կողմից իրեաների առեւանգման դեպքերի հաճախացմանն ու նոր պահանջների առաջադրմանը: Անհրաժեշտություն առաջացավ որոշ սահմանափակումներ մտցնել փրկագնի վճարման հարցում, որտեղ առաջ եկավ «գերիներին ազատագրում են իրենց (գերիների) ունեցած զնի սահմաններում եւ ոչ ավելին» սկզբունքը: Սակայն միջնադարյան ժամանակաշրջանից սկսած՝ այդ մոտեցման ջատագովներն աստիճանաբար տեղի տվեցին, եւ կրկին առաջ մղվեց «գերեվարված իրեաներին ցանկացած գնով ազատագրելու» սկզբունքը, ըստ որի՝ իրեա

ռազմագերու ազատումը դիտվեց հրեական համայնքների անվտանգության ապահովման կարեւորագույն նախապայման: Այս միտումը դարերի ընթացքում այնքան արմատացավ հրեական կրոնաիրավական նորմերում, որ քայլեր ծերնարկվեցին «ցանկացած գնով եւ նույնիսկ ավելին» սկզբունքի առաջմղման հարցում:

Դուդայական մեկնություններում եգիպտական գերության ժամանակաշրջանը կարեւորվում է նաեւ նրանով, որ այն առիթ հանդիսացավ հրեա ժողովրդի համար էլ ավելի արժեւորելու անհատի ու իր մերձավորի ազատության գաղափարը: Այստեղից էլ բխում է հուդայական այն սկզբունքը, ըստ որի՝ քանի դեռ գոնես մեկ հրեա կզտնվի գերության մեջ, հրեական համայնքի ու նրա անդամների անվտանգությունը կլինի սպառնալիքի ներքո:

Հրեա ռազմագերիների՝ ամեն գնով ազատման գաղափարը շարունակում է մնալ հրեության ազգային ինքնության անքակտելի մասը նաեւ Խրայել պետության հիմնադրման փուլում: 20-րդ դարի սկզբներին հրեական պետականության հիմնադրման տարիներին եւ 1948թ. Խրայելի ստեղծումից հետո, երբ ավելի արժեւորվեց հրեա գինվորականության դերը հրեության ու Խրայել պետության անվտանգության ապահովման հարցում, յուրաքանչյուր հրեա ռազմագերու՝ ցանկացած գնով հայրենիք վերադարձնելու հարցը դարձավ խիստ սկզբունքային: Փաստերը բավական տպավորիչ են: Այսպես, Խրայել պետության անկախության համար մղված պատերազմից հետո երկրի ղեկավարությունն արարական երկրների հետ իրականացրեց գերիների փոխանակում, որի արդյունքում ազատ արձակվեցին 6.306 արաբներ՝ 885 հրեա ռազմագերիների դիմաց: Առավել խոսուն է 1956թ. Սինայի կամպանիայից հետո ռազմագերիների փոխանակման վիճակագրությունը, որի արդյունքում Խրայելն ընդամենը 4 հրեա ռազմագերիների ազատ արձակելու համար եգիպտոսին հանձնեց շուրջ 5.500 ռազմագերիների: 1982թ. սեպտեմբերին լիբանանյան առաջին պատերազմի արդյունքում ստորագրվեց «Զիբրիլի առաջին գործարքը» (Ահմադ Զիբրիլ՝ «Պաղեստինի ազատագրման ժողովրդական ճակատ» խմբավորման առաջնորդ)՝ հրեա ութ ռազմագերիների ազատման համար: 1983թ. նոյեմբերին ազատ արձակվեցին միայն վեցը, որի դիմաց Խրայելական կողմը հանձնեց 4.700 գրոհայինների եւ Խրայելի բանտերում գտնվող եւս 65 ռազմագերիների: Իսկ 1985թ. մայիսի 21-ին իրականացվեց «Զիբրիլի երկրորդ գործարքը», որով ազատ արձակվեցին 1.150 դատապարտված գրոհայիններ՝ երեք հրեա ռազմագերիների ազատագրման դիմաց: 2004թ. Խրայելը ազատ արձակեց 450 ռազմագերիների, որոնց դիմաց հայրենիք վերադարձվեցին երեք հրեա գինվորների դիակները:

Ներկայում իսրայելական կողմը բանակցություններ է վարում ՀԱՍՏԱ-ի հետ 2006թ. հունիսի 25-ին գերեվարված իրեա զինվորական Գիլադ Շալիթի ազատման հարցի շուրջ: Գերեվարումից երկու օր անց՝ հունիսի 28-ին, իսրայելը նախաձեռնեց «Ամառային անձրեւմներ» կամ «Գիլադ Շալիթի ազատագրման» ռազմական գործողությունը: Արդյունքում՝ իսրայելական կողմը կարողացավ ձերբակալել ՀԱՍՏԱ-ի 64 անդամների, այդ թվում՝ Պաղեստինի ազգային վարչության 8 նախարարների: Իսկ 2009թ. հոկտեմբերի 2-ին Գ.Շալիթին նկարահանող երկու բոպեանոց տեսաժապավենի ձեռքբերման դիմաց իսրայելական կողմն ազատ արձակեց 20 պաղեստինցի գերեվարված կանանց:

2006թ. հուլիսի 12-ին սկսված լիբանանյան երկրորդ պատերազմի հետեւանքով Յիզրավալահ խմբավորումը գերեվարեց երկու իսրայելցի զինծառայողների (Եհուդ Գոլդվասեր և Էլյադ Ռեգել), որոնց դիակների վերադարձման դիմաց պահանջվում էր իսրայելի բանտերից ազատ արձակել 1.000 պաղեստինցիների: 2008թ. հուլիսի 16-ին՝ գերեվարումից երկու տարի անց, իրեա զինվորների դիակները վերադարձվեցին իսրայել, որի դիմաց իսրայելական կողմն ազատ արձակեց հայտնի լիբանանցի գրոհային Սամիր Կունտարին (1979թ. դատապարտվել էր քառակի ցմահ բանտարկության՝ իրեա ընտանիքի սպանության մեղադրանքով): Բացի այդ, իսրայելը պարտավորվեց Յիզրավալահին հանձնել պաղեստինցի ու լիբանանցի գրոհայինների շուրջ 200 դի: Ե.Գոլդվասերի և Է.Ռեգելի մարմինների մասերի ինքնությունը հաստատելու նպատակով իսրայելական կողմն անցկացրեց ՂՆԹ-ի փորձաքննություն, որը հաստատեց դիակների ինքնությունը: Ի դեպ, մինչեւ իսրայելական կողմից ՂՆԹ-ի փորձաքննության անցկացումը, նման հետազոտություն իրականացրել էր ՄԱԿ-ը, սակայն իսրայելական կողմը որոշ կասկածներ ուներ այդ փորձաքննության արդյունքների վերաբերյալ:

### **Ազգակերտում՝ հերոսապատումներով**

Դրեա զինվորականության դաստիարակության և առհասարակ իրեա ժողովրդի ազգակերտման գործում անգնահատելի է իրեա ժողովրդի հերոսապատումների մասին ազգային կոլեկտիվ հիշողության վերականգնումը: Ռազմական հաղթանակների թեմատիկայի հասարակայնացումն ավելի ակտուալ դարձավ իսրայել պետության իհմնադրումից հետո, եթե նորովի վերիմաստավորվեցին ինչպես անցյալի ձեռքբերումները, այնպես էլ պարտությունները: Այս առումով, հատուկ առանձնացվում է 66-73թթ. Յոհոմեական կայսրության դեմ Մասադա ամրոցի ինքնապաշտպանությունը, որը դարձավ 20-րդ դարի իրեաների ազգային ազատագրական

պայքարի ու հրեական պետականության ստեղծման գործում ոգեկոչման խորհրդանշ՝ մարմնավորելով հայրենապահության բարձր գիտակցությունը, ազգային արժանապատվությունը, եւ ամենակարեւորը՝ մինչեւ վերջ կռվելու պատրաստակամությունը։ Մասադայի ինքնապաշտպանությունը, չնայած ողբերգական ելքին, հրեւության շրջանում ընկալվում է որպես փառահեղ հաղթանակ։ Յրեա շուրջ 960 ապստամբներ, լինելով պաշարված Մասադայի ամրոցում, գերադասեցին զրիվել եւ մնալ ազատ, քան կենդանի՝ գերեվարության մեջ, եւ դիմեցին զանգվածային ինքնասպանության։ Մասադայի հերոսապատման մեծարման ավանդությը նոր եռանդով շարունակվեց Խրայել պետության իհմնադրումից հետո՝ դառնալով Խրայելի պաշտպանության բանակի (ՑԱԽԱԼ) խորհրդանշներից մեկը։ Երկրի ԶՈՒ ստեղծման առաջին տարիներից շարունակվեց հրեա զինվորականության ավանդությը՝ կանոնավոր արշավների կազմակերպումը Մասադայի լեռ, որտեղ տրվում էր զինվորական երդում։

Մասադայի հերոսապատումը կարեւորվում է նաեւ արտաքին քարոզական հարթությունում։ Յիշատակենք 2008թ. մայիսի 15-ին Քննեթերում Խրայել պետության իհմնադրման 60-ամյակի կապակցությամբ ԱՄՍ նախկին նախագահ Զ.Բուշի հայտնի ելույթը, որտեղ առամձնահատուկ նշվում էր նաեւ Մասադայի մասին։ «Խրայելի քաղաքացիներ, Մասադան էլ երբեք չի ընկնի, եւ Ամերիկան մշտապես ծեր կողքին կլինի»։ Խսկ մինչ ելույթը՝ նույն օրը, նախագահ Բուշն այցելել էր Մասադայի լեռ։

Յրեա զինվորականության հոգեբարոյական դաստիարակության գործում մեծ է նաեւ 1920թ. Թել Յայ հրեական բնակավայրի ինքնապաշտպանությունը կազմակերպած Իոսիֆ Տրումբելդորի կերպարը, որը նոր շունչ հաղորդեց 20-րդ դարասկզբին հրեական ազգային ազատագրական պայքարին։ Թել Յայի ինքնապաշտպանությունում, մահկանացուն կնքելիս, Տրումպելդորն արտասանում է հետեւյալ խոսքերը։ «Երջանիկ է նա, ով զոհվում է հայրենիքի համար»։ Այդ բառերը փորագրված են Տրումպելդորի գերեզմանին, որի վրա Խրայելի պաշտպանության բանակի երիտասարդ զինվորականները երդում են տալիս։ Տեղին է հիշատակել 1943թ. այդ առիթով Դ. Բեն-Գուրիոնի ելույթը, որտեղ նա փառարանեց 1920թ. Թել Յայի հրեական բնակավայրի ինքնապաշտպանությունը՝ անվանելով այն «Երկրորդ Մասադա»։ Բեն-Գուրիոնի խոսքերով՝ ինչպես Մասադան, այնպես էլ Թել Յայը, ցուցաբերեց արժանապատվությամբ մեռնելու նոր ճանապարհ՝ զենքը ծեռքին։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՑՈՒՆ

## Ռուբեն Մելքոնյան

ՀԱՅ – ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ ..... 1

## Սերգեյ Վարդանյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. ՀԱՅԱԽՈՍ ՀԱՄՇԵՏՑԻՆԵՐ ..... 5

## Արեստակես Սիմավորյան

ՎՐԱՑԱՑԱԾ ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿՆԵՐ ..... 9

## Արաքս Փաշայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ ԱԴՐԲԵԶԱՆԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ  
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՍՊԵԿՏԸ ..... 17

## Գագիկ Տեր-Հարությունյան

«ԳՈՐԾ» ՊԱՏԵՐԱԶՄ ..... 21

## ԲԵՆԻԱՄԻՆ Պողոսյան

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՇՈՒՐԶ ..... 27

## Սուրեն Մանուկյան

ԱՄՆ–ԻՍՐԱՅԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵԼԵՎԵԶՆԵՐԸ ..... 33

## Կարեն Վերանյան

ԶԻՆՎՈՐԱԿԱՆԻ ԴԵՐԸ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ ..... 39

**Ծապիկին պատկերված է  
Վարագ լեռը**

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երևան, 375010, Մելիք-Աղամյան 2: Դեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ O1U 000176:  
Տպագրվել է «Անարաս» տպարանում: